

Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՅԵՎ Խ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՊՐԵՇԱՆ - 1934 - ՅԵՐԵՎԱՆ

491.99-8

9-31

Հա 876

Մ. ԳԱՎԱՐԵԱՆ ՅԵԿ Խ. ԱՅՎՈՋԱՆ

491.99-8

9 - 31

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԿԻՍԱ.ԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս գասահիրքն ոգտագործվելու և նարեկ
բանկոմբինատների I ողակի խորեցում

ՑԵՐԿՈՐԴ ԲԱՌՓՈԽՎԱՇ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հատուտված և ՀՅՈՒ Լուսագիրամատի կազմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԱ
ՅՈՅՈՒՆԱԴԵՆԻ
Ակադեմիա Խան
СССР

ՊԵՏՀԱՆԱԿ-ՈՒՍՏԱՆԿՑՐԱՏՐԱԺՐԱԾԱԺԻՆ

ՅՈՒՆԱՆ-1934

14 MAR 2013

1. ՏՈԿՈՐ ՎՈՍԿԱՆԸ

Բագվի բանվորական դպրոցում ցուցակագրվելու համար ուսուցչուհի Մագթաղին մոտեցավ մազերն սպակած, տարիքավոր մի բանվոր:

— Ընկե՛ր Մագթաղ, անունս Վոսկան ե, ազգանունը՝ Վահանյան, արհեստով՝ տոկար եմ, խնդրում եմ ինձ ել գրես:

Ուսուցչուհին նայեց ծերացած բանվորին, ժպտաց ու ասաց.

— Ընկե՛ր Վահանյան, դուք արդեն տարիքով մեծ եք, յերեկի շուտով աշխատանքից կազատվեք, ձեր դպրոց զալը միտք չունի. չենք կարող ընդունել, ավելի շուտ՝ իրավունք չունենք:

— Ես քեզ ասում եմ՝ գրի՛, կարդալու ցանկություն ունեմ. ել տարիքը վո՞րն ե:

Հերթի կանգնածները հուղվեցին:

— Ե՛յ Ընկե՛ր, չո՞ւտ արա, մենակ դո՞ւ չես: Վոսկանը մոտեցավ բանվորական դպրոցի վարիչին:

— Ընկե՛ր վարժապետ, յեթե ես տարի ինձ ուսումնարանում տեղ չտաք՝ վատ կլինի: Քառասուն տարվա բանվոր եմ...

— Ընկե՛ր Վոսկան, ցավում եմ, բայց ի՞նչ արած, կարգն այդպես ե:

— Բա դուք նրան խոսքն ի՞նչպես եք կատարում:

— Ո՞ւմ խոսքը:

— Նրա, վոր ասել ե՝ սովորական յերկրում մի անկերթ, անդրագետ մարդ չի լինելու: Ի՞նչ կասես:



Պատ իմրագիր Մ Միքյան Տեխ իմք Գ ԶԵՍՅԱՑ
Արքագրեցին Խարադանյան յեկ Մ ՔԵՍՅԱՑ

Հանձգած ու արտադրութան 8 մարտի 1934 թ.

Մասրագրած և ապելու 11 մարտի 1934 թ.

Հրատ. № 2914, Գլուխ. № 8482 (ք). Պատվիր № 488 Ժմբած 60,000

Պատհանակ տպաքան

— Հետո՞ ինչ. մենք այդ գիտենք, — ժողովաց վարիչը:

— Հետո ե՛ն, վոր մեզ հուակ կտան: Հեղափոխության 15 տարին լրանում ե. կուսակցությունը հաշվի կնատի ու մեկ ել կտեսնի, վոր Սև Քաղաքի գործարանի բանվոր տոկար Վոսկանը մնացել ե անդրագետ... ի՞նչ կպատասխանեք հը՞՝, ասե՞ք:

Ու հաղթանակ տարածի նման մի քայլ առաջ գնադ:

Վարիչն ու ուսուցչուհին իրար նայեցին հուղած: Բանվորները ժամում եյին, խրախուսում Վոսկանին:

— Վորպես բացառություն, ընդունեք, — ասաց վարիչը: Բանվորները ծափահարեցին:

Վոսկանի ուրախությանը չափ չկար:

2. ՄԵՐ ԿՈԼԽՈԶԻ ԱՐՏԵՐԸ

Մեր կոլխոզի արտերը
տրակտորը վարել ե,
կոլխոզն այսոր ծովի պես
կանաչել ե, ծաղկել ե:

Մեր կոլխոզի արտերը
նաշխուն բերքով հասել են,
ցորենի ծով հասկերը
ճոխ բերքերով լցվել են:

Ու բացմել են վարդերը,
որորիում են հասկերը.
Հազար երնեկ նոր կանքին՝
չենացել են դաշտերը:

3. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ

1905 թվի հունիսի 14-ի առավոտյան, յերբ տեղի յեր ունենում «Պատյոմկին» ահագին զրահանավի սովորական մաքրումը, նավաստիները նկատեցին, վոր ճաշի համար պատրաստված միսը հոտած ե, վորդերով լի:

Այս լուրը տարածվեց բոլոր նավաստիների շրջանում, գայրույցի բռնկեց և «կայձից առաջացավ բոց»:

— Սրիկա՛ սպաներ: Զեն հետաքրքրվում, թե ինչ մսով են մեզ կերակրում:

Վըա հասավ ատելի հրամանատարը և կարգադրեց:

— Ճաշը պատրաստել, և ով վոր միսը զննի, անունը նշանակել և հետո ինձ գեկուցել:

Յերբ ճաշը պատրաստվեց և յերբ հրամայեցին ճաշել, վոչ վոք չմոտեցավ ճաշին, վոչ վոք չշարժվեց տեղից:

Անմիջապես հայտնեցին հրամանատարին, վոր գրիւագոր սպայի հետ միասին շտապեց «կարգը վերականգնել»:

«Պատյոմկին» նավաստիների ամբողջ ջոկատը, 700 մարդուց ավելի, տախտակամածն են կանչում և հրամայում շարքի կանգնել:

Շարքի առաջ կանգնած գլխավոր սպան մի հանդուզն և գրգռիչ ճառ և ասում:

— Յես քանի անգամ ասել եմ ձեզ, վոր նման անկարգություններ գինվորական նախի վրա անթույլատրելի յեն: Այդ բանի համար ձեզ պատեղից են կախում, և նա մատնացույց ե անում կայմի ծայրը:

Ապա յավում ե մի ահարկու հրաման.

— Ով ուզում ե բորշ ոտի, այս կողմը ոտ:

Շարքից դուրս են գալիս միայն նախի հին ծառայողները, յենթասպանները:

4. ԱՐՑՈՒՆՈՏ ԿԻՐԱԿԻ

Ամբողջ շարքը քարացած կանգնել եւ:
 Այդ միջոցին վորոտում ե մի նոր հրաման.
 — Պահակախո՞ւմք, վե՞ր:
 — Յեղբայրնե՞ր, ի՞նչ եք անում: Մտաբերեցե՞ք
 մեր յերդումք, մոր մերոնց վրա չսկիտի կրակենք, — կան-
 չեց նավաստի Խատյուշենկոն տոաջ փաղելով:
 Յեկ պահակախումքը, մի մարդու պես, հրացան-
 ները գայր թողեց, փողը գեպի գետին:
 Այդ նանակում եր, թե չենք ուզում կրակել:
 Իսկ Խատյուշենկոն նոր ուժով կանչեց.
 — Յեղբայրնե՞ր, մեր ընկերներին մենակ չթող-
 նենք: Վերցրե՞ք հրացանները, փամփուշտներ դրեցե՞ք:
 Չարկեցե՞ք ժողովրդի դահճներին:
 Յեկ կատարվեց հերսոնական գործը:
 — Կորչի՛ ինքնակայությունը: Մահ բռնակայնե-
 րին, — լսվում ե «Պատյոմկին»-ի վրա:
 Յեկ հրացանները վորոտում են:
 Ղպստամբությունը տաքանում ե:

Զմեռվա մի սաստիկ ցուրտ առավոտ եր: 1905 թվի
 Հունվարի 9-ին (22) Լենինգրադի բանվորական թաղե-
 րից ահազին ամբոխ եր առաջ շարժվում: Առաջից տա-
 նում եյին թաղավորի ու սրբերի պատկերները. յետից
 զնում եյին բանվորները, բանվորուհիներն ու նրանց
 յերեխանները տոնական հաղուստներով:

Ո՞ւր եյին զնում և ինչո՞ւ:

Սովոր ու կարիքն եյին ստիպել նրանց՝ սիրտ անել
 թաղավորի մոտ զնալու և խնդրելու, վոր իրենց պաշտ-
 պանի հարուստներից ու վոստիկաններից:

Թաղավորին ուղղած իրենց խնդրագրում նրանք
 գրում եյին.

«Թաղավո՞ր, մենք բանվորներս, մեր կանայք ու
 յերեխանները և մեր ծերունի ծնողները յեկել ենք քեզ
 մոտ արդարություն և պաշտպանություն խնդրելու:

«Մենք ծայր աղքատության ենք հասել, մեզ ծան-
 րաբեռնում են անտանելի աշխատանքներով, մեզ ան-
 պատվում են, մեզ մարդու տեղ չեն դնում, մեզ ստրուկ
 են համարում, վոր պետք ե միայն համբերենք ու լոենք:
 Ել ուժ չմնաց, թաղավոր, մեր համբերությունը կտրր-
 վում ե, հասել ե այն սոսկալի բողեն, յերբ մեռնելն
 ավելի լավ ե, քան չտեսնված անարգանքներ կրելը»:

Յերկու հարյուր հազարից ավելի ամբոխը մոտե-
 նում եր թաղավորի պալատին:

Գնում եյին հանգիստ, առանց յերգի, առանց կար-
 միր դրոշակների... Գնում եյին խնդրելու, աղաչե-
 լու...

Յեկ հանկարծ հրացանի կրակ:
 Առաջին շարքերում շփոթություն ընկալվ: Կարծե-

ցին, թե ինչ վոր սխալ բան կատարվեց։ Շարունակեղին
առաջ գնալ։ Նորից կրակեցին։

Մեկը ընկավ կուրծքը վիրավոր… Ամբոխը կանգ
առագ…

«Մի՞թե չպիտի հասնենք թագավորին, մի՞թե կրա-
կում են մեզ վրա»։ — շնչացին ամենքը։

Հինգ հազար հոգի վիրավորվեց, հազար յերկու հա-
րյուր տասնմեց հոգի սպանվեց. և այդ բոլորը մի որում,
Արյունոտ Կիրակի որը, հունվարի 9-ին (22)։

Լավագույն բանվորների հետ թագավորն այս ձեռվ
հաշիվ մաքրեց։

Այդ որից բանվորները հասկացան, վոր քանի թա-
գավոր կա, նա միշտ բուրժուազիսլի. կողմը կլինի, և
բանվորն որ չի ունենա։

«Բանվոր գաւակարգը քաղաքական կովի մեծ գաս-
տացավ, — գրում եր իւյիշը այն ժամանակվա «Վաե-
րյոդ» թերթում. — պրոյետարիտիտի Հեղափոխական
կրթությունը մի որում այնքան առաջ գնաց, վոր չեք
կարող առաջ գնալ ամիսներում և տարիներում»։

«Հեղափոխական մոմենտի ամենամերժավոր խըն-
դիրներից մեկը գատնում է ժողովրդի զինումը»։

«Միայն դինում ժողովուրդը կարող է ազատու-
թյուն ձեռք բերել»։



Գ. Ե. Աենին

5. ՊԵՏՔ Ե ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՑՆԵԼ

Փոքրիկ բնակարանում նստած եյին միքանի մարդ ։
Ժողովի քարտուղարն արձանագրեց՝

ԷՆԹԱԳԻԼ ՄՈՄԵՆՏ : ԽՈՍՔԸ պատկանում է... .

Նա ինչ-վոր ազգանուն դրեց, բայց հետո իսկույն
խնամքով ջնջեց :

— Այո, ավելի լավ ե առանց ազգանվան, — ասաց
նրա հարեանը, վոր նայեց արձանագրությանը :

Իսկ զեկուցողը, վորի ազգանունը ջնջել եյին, արագ
բարձրացավ աթոռից :

Դա Լենինն եր :

Չորս ամիս շարունակ նա թագնվում եր ժամանա-
կավոր կառավարությունից : 1917 թ. հուլիս ամսոին
բանվորների անհաջող ապստամբությունից հետո բուժ-
ժուազիան վորոնում եր Լենինին, վորպեսզի սպանի
նրան : Բայց բանվորներն աջակցեցին Լենինին թագնվե-
րու, և նա Պետրոգրադից հեռացավ :

Լրագրերը գրում եյին, վոր Լենինը փախել ե ստոր-
ջրյա նավակով կամ ողանավով : Իսկ Լենինն այդ ժա-
մանակ ապրում եր խոտհարքում, վրանում, Սեստրո-
րեցի մոտ :

Լենինին ուղարկում եյին բոլոր լրագրերը, գրում
եյին նամակներ : Ուստի և նա լավ տեղյակ եր, թե ինչ,
ե կատարվում Պետրոգրադում և ամբողջ յերկրում :

Արդեն Հոկտեմբերին Ռուսաստանում Համարյա թե-
րոլոր բանվորները ու զինվորները բայց լեիների կողմն
եյին :

Լենինը վճռեց՝ ժամանակն ե իշխանությունը վեր-
ցնելու :

Նա արդեն միքանի նամակ եր գրել իր կուսակցա-
կան ընկերներին .

— Պետք ե ցրել ժամանակավոր կառավարությունը
— Դանդաղելր հանցագործություն ե: Ժամանակ ե
իշխանությունը վերցնել:

Լենինը կարծում եր, վոր Պետրոգրադի բայց և իկ-
ները չափազանց գանդաղ են գործում :

Յեզ նա ինքն անսպասելիորեն յերեաց Պետրոգրա-
դում :

Բայց և կների կուսակցության կենտրոնական Կո-
միտեն հավաքվեց Լենինի գլխավորությամբ :

Ժողովը տեղի ունեցավ գաղտնի :

Ահա թե ինչու քարտուղարն այնպես խնամքով ջրն-
ջեց Լենինի ազգանունն արձանագրության մեջ :

Չե՞ վոր արձանագրությունը կարող եր ժամանա-
կավոր կառավարության ձեռքն ընկել, և այն ժամա-
նակ նա կիմանար, վոր Լենինը Պետրոգրադումն ե:

Լենինին ճանաչել չեր կարելի: Նա ածիլել եր մի-
րուքը :

Լենինը ձեռքերը գրպանները դրած, անցավ սենյա-
կով և սկսեց ճառը :

Նա խոսում եր այն մասին, վոր չի կտրելի սյլես
վոչ մի բոպե սպասել: Բանվորները բայց լիկների կողմն
են, զինվորները նույնպես: Դրա համար ել պետք ե շու-
տով տապալել կերենսկուն և իշխանությունը վերցնել:

Ընկերներից մի քանիսը համաձայն չեյին Լենինի
Հետ: Բայց կենտրոնական Կոմիտեի մեծամասնությու-
նը մտածում եր այնպես, ինչպես Լենինը: Վիճականու-
թյունից հետո կենարունական Կոմիտեն վորոշեց՝

«Սկսել զինված ապատամություն»:

6. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՔՍԱՆՀԻՆԴԸ

Զինվորները շղթա կազմած՝ ժամե-ժամ ավելի
մոտենում եյին Զմեռային պալատի հըապարակին գ

նրանց շարքերն ավելի ու ավելի խտանում եյին։ Ժամի
ե-ի մոտ պալատը շրջապատված եր։

Ամենքը լարված սպասում եյին գրոհի մեծ ըռպե-
յին...

Ժամի յերեքին ժամանակավոր կառավարության
դրությունն անհուսալի յեր...։ Արդեն յերկաթուղինե-
րի բոլոր կայարանները, հեռախոսը, հեռագրատունը,
եերտական կայարանը, ջրանցքը գտնվում եյին մեր
ձեռքում...

Մի քանի ակնթարթ...

Եեվ Պետրոգրադի փողոցներում վորոտացին թըն-
գանոթները, բայց վոչ ժողովրդի գեմ, այլ ժողովրդի
համար։

Մի քանի հրանոթներ պայթեցին Զմեռային պալա-
տի միջանոքներում։ Տատանումներին վերջ եր տրված։
Նախատիներո, կարմիր-դվարդիականները, զինվոր-
ները՝ գնդացիրացին խոչածե կրակի տակ՝ թռչում եյին
Զմեռային պալատի առջեր շինված բարիկադների մրա-
յով, տապալում եյին նրանց պաշտպաններին և ներս
խուժում։

Մասսաները ներս են խուժում սենյակը։ Նրանց
մէջ ե ընկ. Անտոնովիր։ Այն, ինչ վոր անվանում են ժա-
մանակավոր կառավարություն, այնուեղ և...գրեթե
մեռած Փիզիկապես։

— Պետրոգրադի Խորհրդի Ռազմա-Հեղափոխական
կոմիտեյի անունից հայտարարում եմ ժամանակավոր
հառավարությունը տապալված, — հայտարարում ե
Անտոնովիր։ — Բոլորդ ձերբակալված եք...

Տապալվածները թոթովանքով խնդրում են, վոր
իրենց պաշտպաննեն մասսաներից... Նախատիները
դուրս են տանում նրանց սենյակից։ Աղաղակներ։ —
Տվե՛ք մեզ կերենսկուն... կերենսկուն... Նա փախել և

Պետրոգրադից վորպեսզի ռազմաճակատից գորքեր բե-
րի։

Միջանցքները թնդում են հուզմունքի, զայրույթի,
կատաղության աղաղակներից... Ձերբակալվածներին
տանում են ներքե... բակր... անց են կացնում գոնե-
րով... բարիկադների վրայով... դեպի պալատի հրա-
պարակը... ։

Հրացարակում զինվորների զայրույթի աղաղակ-
ներ են լավում... «Գնդակահարե՛ր... մա՛հ... մա՛հ»։ Ճե-
րեցնենկոյին, կոնովարութին և ուրիշ մի յերկուին միքանի
հարված են տալիս... Կարմիր գվարդիականները հորդո-
րում են զինվորներին։ Զեկափարներն աղաղակում են.
«Մի մթագննք պըրուետարական հաղթանակը»... կատա-
ռած զինվորները յետ են քաշվում ձերբակալվածներից։
Կարմիր-գվարդիականներն ողակում են նախկին կառա-
վարությունը։ «Հառաջ»։ — Ողակն առաջ շարժվեց դե-
պի Պետրոգրադովսկի բերդը։ Տանում են հեղափոխու-
թյան դեմ ստեղծված նկուղները։

7. ՄԱՅԻՍՅԱՆ ՈՐԵՐԻՆ

Եես շատ շուտ ընտելացա բանտի կյանքին։ Ինձ
կանչում եյին «բանտի աղջիկ»։

Դաշնակցական կառավարությունն իրը թե պատ-
ժելու համար ինձ բանտարկեց, սակայն այնպիսի մի-
ջավայր գցեց, վոր յես կոմունիստական վոգով դառ-
տիարակվեցի և այնուհետեւ ել վոչ վոք չկարողացավ
կտրել ինձ կուսակցությունից։

Ողոստոսի վերջն եր։ Մի անդամ ներս մտավ գլխու-
վոր վերահսկիչն ու հայտնեց, վոր գատախազը կանչում
և ինձ։ Գնացի։ Շատ եյի լսել այդ մարդու մասին, բայց
չեյի տեսել։ Նա ինձ վրա առաջին իսկ հայացքից վստ
ոպավորություն թողեց, գուցե նրա համար, վոր իմ

առաջ կանդնած եր դասակարգային թշնամի: Յերկար ճառելուց հետո, նա ասաց:

— Դուք դեռ չահել աղջիկ եք, ի՞նչ գործ ունեք այն սրիկաների հետ: Մի դիմում գրեցե՞ք, վոր նրանք ստիպմամբ ձեզ տարել են իրենց շարքերը: Այդ դիմումը մենք կտպենք մեր թերթերում: բանտից կաղատենք ձեզ ու աշխատանք կտանք, վորովհետև հայ աղջիկ եք, խղճում եմ ձեզ:

Իմ կյանքում դրանից ավելի զգվանք չելի զգացել, այնպես ջղայնացած եյի, վոր հաղիվ-հաղ ինձ զսպելով ասացի:

— Վերջապես բավական ե...—և դուրս յեկա նրա դրասենյակից:

Յերբ կամերա վերադարձա, ընկերներս անմիջապես ինձ շրջապատելով՝ սկսեցին հարց ու փորձ անել: Բայց յես այնքան հուզված եյի, վոր չկարողացա վոչինչ պատասխանել:

Այդպես շարունակվում եր մեր կյանքը բանտում: Մի որ կուշտ, մի որ քաղցած:

Մեպտեմբերի 13-ին նշանակվեց 18 կոմունիստների դատր, վորոնց թվում և իմը:

Դաշնակցական արտակարգ դատարանը բայց կիշերին դատեց, վորպես «աղջի գավաճանների»:

Յես, վորպես անչափահաս աղատութեցի բանտից, իսկ մյուսները 4—5 և տասը տարով կալանքի յենթարկվեցին:

Դաշնակցական կառավարությունը, սակայն այդքան կյանք չունեցավ, վորովհետև Մայիսյան ազգայակարությունն արդեն ստորագրել եր դաշնակների մահվան դատավճիռը, վորը կատարվեց 20 թվի նոյեմբերի 29-ին:

8. ԽԼՇԻՉԲ ԳՅՈՒՂՈՒՄ

1.

Մոսկվայի նահանգի կաշինո գյուղում 1920 թվին կազմակերպվեց գյուղատնտեսական «Արշալույս» ընկերությունը: Այդ ընկերությունը հանդացրեց գյուղում ելեկտրականություն անցկացնել: Գյուղացիներն այնշափ ուրախ եյին, վոր ելեկտրական լույսը գրավեց նավթի լամպի տեղը: Գյուղական ընդհանուր ժողովում վորոշեցին ելեկտրականության բացման առթիվ գյուղում տոն կատարել: Վորոշեցին՝ կենտրոնից գործիչներ հրավիրել:

Ընկերության վարչությունը մտածեց հրավիրել Ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ ընկեր Լենինին: Վոմանք գեմ եյին այդ առաջարկին, մտածելով, վոր ընկեր Լենինը շատ զբաղված ե և չի կարող կալ: Բայց և այնպես վորոշեցին Լենինին հրավիրագիր ուղարկել: Վարչության անդամները դողդողջուն ձեռքով ստորագրեցին այդ հրավիրագիրը:

2.

Հունավ 1920 թվի նոյեմբերի 14-ը: Կաշինո գյուղի Համար պատմական որը: Ժամի 12-ին ավտոմոբիլով Հյուրերն սկսեցին գալ: Քաղաքի կողմից ավտոմոբիլն արշավում ե ուղղակի ղեալի բազմությունը:

Ավտոմոբիլից դուրս ե գալիս կաշինո գյուղացի Կուկովը: Նրանից հետո դուրս ե զալիս 50 տարեկան մի մարդ:

Վարչության անդամները մոտեցան յեկիորներին և վողջունեցին:

— Բարեւ, ընկեր:

Ավտոմոբիլից իջած մարդը սիրալիք բարեկում ե
ամենքին, սեղմում ե բոլորի ձեռքը և ասում իր անունը
—Լենին:

Ամենքը քարանում են զարմանքից, չեն հավատում,
իրենց ականջներին ու աչքերին:

Հանրապետության առաջնորդն այնքան համեստ ե
հազնված, այնպես հասարակ ձեռվ և առանց թիկնու-
պահների:

Առաջին բարից Վլադիմիր Իլյիչը դառնում ե գյու-
ղի մարդը:

Այդ մեծ մարդու զարմանալի պարզությունը միան-
գամից հմայում ե գյուղացիներին:

Կարճ վողջույններից հետո հյուրերը հրավիրվում
են ներս: Բերում են թեյ և ուտելիք:

Սկսվում ե ջերմ, մտերմական զրույց գյուղացինե-
րի և լենինի մեջ:

Ապա տեղի յե ունենում գյուղացիական միտինո: :
Ընկերության վարչության նախագահը միտինդը բաց ե
անում, վողջույնի խոսք ե ասում և իր ճառից հետո խոս-
քը տալիս ե ընկ. լենինին:

Իլյիչը խոսում ե հուզմունքից գողացող ձայնով: :
Շնորհակալություն ե հայտնում հրավերի համար:
Ասում ե, վոր իր կյանքում առաջին անդամն ե գտնիւմ
առում ականջներով և ուրախ տրամադրություն-
առում գյուղական ժողովրդի մեջ, վոր իրեն զում ե
մորակես իր մոտ բարեկամների և ազգականների շրջա-
նում:

Գյուղական բազմությունը մեծ սիրով ե խում իլ-
յիչի պարզ խոսքերը, արցունքն աչքերին վորսում ե
նրա յուրաքանչյուրը բառը:

Չեկուզման առիթով գյուղացիների բոլոր հարյու-
րին լենինը պարզ պատասխաններ ե տալիս:

9. ԻԼՅԻՉԻ ԲՈՒԽԿԵՑՔ

Այսպես ե կոչվում նավթաշխարհի այն մասը, ուր
կասպիականը հետ են տվել, նրա մագիլներից խել ցու-
մաքը և վիշկաներ են աճեցնում այնուեղ:

Դեռ տասը տարի առաջ, այստեղ ծովն ե տարած-
վել ու ձեների պարը: Իսկ հիմա հաղթահասակ վիշկա-
ներն են ծովափին, ցամաքի վրա, ջրերում:

Ծովը նավթի բույրով ե չնչում: Ծովը լվանում է
վիշկաների վոտները:

Ծովի ջուրը քամում են և կաչալիան նալիթ ե քա-
շում ծովից:

Շտանգը՝ յերկաթի «անսկիզը ու անվերջ» այս խո-
ղովակն ահա իջել ե 518 մետր, ծակոտել հողի կուրծքը,
ցեխախառն այսպ, հող ու քար ե դուրս չպրոտում: Հո-
տուում, վորոնում ե նավթը և նրա համար ճանա-
պարհ հարթում:

Անրնդ հոտ կատարելագործում, անրնդ հատ առաջ-
խաղացում: Այսպես ե պայրարում Բագմի պրոյետո-
րիատը բնության գեմ: Ամերիկյան վերջին մեթոդովն
ե նավթը դուրս գալիս հողից, ծովից: Միայն այսպես
կարելի յե արդարացնել իլյիչի անունը: Միայն այս
կերպ կարելի յե նրա պատգամները կատարել.

Ֆշշում ե նավթահամ ծովը: Մերթ թշնամաբար իր
ալիքների հարվածներով հարձակվում ե աշխատանքի
այս բերդերի ու աշտարակների վրա ու պարտված հետ
նահանջում և մերթ հանդարտ ու սիրալիք ըոյում նրանց
պատվանդանները:

Փայտե կամրջակները կապում են վիշկաները ցո-
մաքին: Փայտե կամրջակները զորչ ու նավթուտ են: Իսկ
ցամաքում ժանդակած ու նավթածածկ ջրեր կան,
ծհածանի զույներով, ուր ուրվագծվում են վիշկաների
հասակները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՄԵՆԻԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒԹԵԱՆ
ՊԵՏՐՈՎԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՄԵՆԻԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒԹԵԱՆ
ՊԵՏՐՈՎԱՆ

Վիշկաները՝ ցամաքում, վիշկաները՝ ժանդաջրեա
րում, վիշկաները՝ ծովում, բանվորական ջլուտ բա-
զուկների պես վեր բռունցքված:

Այդ բազուկները սանձել են ծովը, հետ չպրտել
նրան, նվաճել ցամաքը: Քամում են հողի թանկագին
արյունը: Ծակոտում յերկրի կուրծքը: Անխնա, ան-
խնա:

Կերտում են նոր աշխարհ: Այդ հաղթական բազուկ-
ները:

10. ՆԱ. ԿԳԱ.

Կոմունիզմը կդա սրտերի,
արտերի վրայով կդա նա,
համայնական հասուն արտերի,
արտերի վրայով կդա նա,
իմ յերկրի փրիբարաշ ջրերի,
ջրերի վրայով կդա նա,
հույսով լի պղնձե լարերի,
լարերի հոսանքով կդա նա:

Կզնդան ռելսերը յերկաթի,
յերկաթի ճամբեքով կդա նա.
կփլչեն կարգերը դարերի,
սարերի վրայով կդա նա.
թշնամին կլինի մահով լի,
չահերի վրայով կդա նա.
ընկե'ր իմ, շառաչուն մեր կովի,
մեր կովի շառաչով կդա նա:

11. ԲԱՆԱԿ ԳԻԱՅ

Սիրած տղես մի կաղնի ծառ
Եսոր կարմիր բանակ գնաց.
Ենքա՛ն խելոք, ենքա՛ն պայծառ,
Վոնց վոր սրած դանակ գնաց:

Մոսին պիտի ձեռքը առնի
Հաստատ կանով, ամուր մեջքով
Գրանիցը մեր պաշտպանի՝
Թշնամու դեմ արթուն աչքով:

Մենք կոլխոզը կմեծացնենք,
Բոլ մաշինա կառնենք գեղին,
Թե հարկ լինի, յես ել մի որ
Կերթամ—Հասնեմ են յայ տղին:

Կտրիճ տղես մի կաղնի ծառ
Եսոր կարմիր բանակ գնաց,
Ենքա՛ն խելոք, ենքա՛ն պայծառ,
Վոնց վոր սրած դանակ գնաց:



Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

12. ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ

Իոսիֆ Ստալինը ծնվել է Վրաստանում՝ 1879 թ. կոշկակար բանվորի ընտանիքում։ 13 տարեկան հասակում նա մտավ միջնակարգ դպրոց, բայց չվերջացրեց։ Նրան հեռացրին զպրոցից, ցարական իշխանության դեմ բանվորների մեջ հեղափոխական աշխատանք կատարելու համար։

1901 թ. մինչև 1917 թ. ընկեր Ստալինը 10 անգամ ձերբակալվել է, բանտ նստել ու աքսորվել, տաժունակիր աշխատանքի դատապարտվել։

1913 թ. մինչև 1917 թ. նա աքսորված էր Թուրքիստան։

Ընկ. Ստալինը կենինի և կուսակցության կենտրոնի մյուս անդամների հետ ակտիվ կերպով մտանակցում էր Հոկտեմբերյան հեղափոխության որերին տարվող պայքարին։

1917 թվից մինչ 1922 թ. նա յեղել է ազգությունների զործերի ժողկոմ, Բանդյուղության ժողկոմ, Թագամահեղափոխական Խորհրդի անդամ։ Իր ցույց տված ուղղմական ծառայությունների համար նա արժանացել է կարմիր գրոշի շքանշանի։

1922 թվից ընկ. Ստալինը Համկամկուսի (թ) կենտրոնի գլխավոր քարտուղարն է, իսկ 1925 թվից՝ Կոմիտերնի Գործադիր Կոմիտեյի նախագահության անդամ։

Ընկ. Ստալինը կուսակցության սիրմած առաջնորդըն է։ Նրա հմուտ և ուժեղ ղեկավարության տակ կուսակցությունը գործում է լենինյան ճիշտ ուղիղի և հաջողությումը տանում առցիւլիղմի կառուցումը մեր յերկրում։

13. ԳԻՇԵՐ

Դեղնցըկ ու զով
զիշեր ե պայծառ
անուշիկ քնով
քնած ե աշխարհ:

Ծառերը մեղմիկ
քամուց որորփում,
հեղիկ ու նազիկ
յերգ են սլոլում:

Իսկ լայնատարած
յերկնակամարով
լուսինն ե կամաց
անցնում սահելով:

Աստղերն ել սրուն
ժպիտով փայլում,
իրենց սիրելուն
ճամբա յեն դնում:

Գեղեցիկ ու զով
զիշեր ե պայծառ,
անուշիկ քնով
քնած ե աշխարհ:

Ու քնած յերկրին
գետակն ու բուն
յերգով միասին
որոր են ասում . . .

14. ԳԻԳԱՆՏԻ ԴԱՇԵՐՈՒՄ

Կոմբայնը—դաշտերի նավն ե: Կոմբայնիստը՝ կապիտանը: Նա կանգնած ե կամրջակի վրա ու վարում ե մեքենան:

Կոմբայնի հարիչը կտրում ե հասկերը, փոցխերով դրանց հավաքում ծեծիչի թմբուկի տակ: Հացահատիկը լցնում արկղը: Յեթ ահա արկղը լիքն ե: Բեռնավտոն կրում ե հացահատիկը և տանում երեխատոր:

Գիգանտի դաշտերը լավ բերք են տալիս: Պետք ե շտապ համարել: Դանուաղել չի կարելի: Հացահատիկը թափվում ե, վատ յեղանակը վնասում ե հացին:

Շտաբը ել աւէելի յեր աշխատում, քան առաջին ոռերո: Ճեմֆոնից չելին հեռանում: Հարգնում ելին, թե ինչպես ե դնում բերքահավաքը:

Բրիդաղներից պատասխանում ելին.

— Ամեն ինչ կարգին ե: Կոմբայնը մի քիչ փառել եր՝ շինեցինք:

— Աշխատանքը լավ ե գնում: Սպասում ենք բեռնավտոնների: Կարգաղքեցեք շտապ կրեն հացահատիկը:

Առաջին տարին Գիգանտը յերկրին ավեց վեց հարյուր հազար ցենտներ հացահատիկ:


Սովորողի լաբարատորիայում վերցնում են ցորենի հատիկները, մեկ-մեկ կըոռում, հատկությունները վորշում: Լավ հատիկ ե:

— Առաջին տեսակի, — ասում են լաբարատորիայում:

Ելեվատորից հացահատիկը լցվում ե անմիջապես վագոնները: Միքանի բոպե և վագոնը լիքն ե:

Իսկ ամբարներից ցորենը պարեւերով կայարան են կրում տրակտորային ոնացրները:

Ամեն որ կայարանից գնացքներ են մեկնում ցորենով բեռնած:



15. ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՒԻՆ

Ծաղկել են սիրուն
նոր զարնան նման
մեր շարքերը վառ՝
տոնին Մայիսյան:
Աղատ մեր յերկրում
տիրում ե այսոր
իինդ ու բերկրում.
մանուկ ու բանվոր,
դ տուղասի, զինվոր,
յերած մնասին
տոնում են ուրախ
տոնին Մայիսի...
Ստիայն ամեն տեղ
մեղ պես այս որը
առատ չեն տոնում
մեր բնկերները:
Նրանց չեն թողնում,
մոր աշխատանքի
մեծ որը տոնեն.—
սպառնալիքով
մտրոկի, ծեծի—
քշում են գործի...
Բայց նրանք խմբով
յեխում են ցույցի.
նսանց կանչում ե,
նոռանց քաշում ե
զվարթ աղմուկը

ըմբուստ փողոցի:
Նրանք յելնում են
արձագանդելու,
նրանք յերգում են
մեղնից հեռու
մեղ հետ միասին
Մեկը Մայիսի:
Վողջույն ձեղ, հեռու
մեր բյուր ընկերներ
մեր ազատ յերկրում
ձեր ձնշված յերկրի
բողոքն ենք լսում:
Դուք չվհատվեք,
մոտ ե այն որը,
յերբ մենք
կհաղթենք
յերբ վոր բանվորը
այդտեղ ել կրինի
իր յերկրի տերը.
ու մեր շարքերը
խառնված իրար՝
աշխարհե աշխարհ
կդոչեն ուռա՞.

ու տերն աշխարհքի
կտոնի ազատ
տոնն աշխատանքին

16. ՊԱՌԱՎ ԹՐՔԱԽՀԻՆ

Դնացքը վերջին անգամ սուլեց և ուժգին թափով
առաջ սլացավ: Վաղոնում շատ եր տաք, ոդը ճնշող:
Մեր գիմաց նստած ճանապարհորդներից մեկը թաշկի-
նակով սրբում եր իր ճաղատ գլուխը, վորտեղ յեղեռում
եր մեծ վերքի տեղ՝ ըստ յերկույթին այդ վերքը մնացել
եր շախսեց-վախսեցից:

Այդ ժամանակ մոտս նստած ծեր թրքուհին մի
զննական հայացք գցեց հարեանի վրա և յերեսը գարձ-
րեց հակառակ կողմը: Յես տեսա՝ ինչպես նրա գեղնած
աչքերից արցունքի կաթիւներ եյին թափվում: Յես նա-
յում եյի այդ տանջված զեմքին և զգում, թե վորքան
խորն և նրա վիշտը: Այդ ժամանակ անվստահ քայլերով
մոտեցա նրան ու հարցրի.

— Մայրիկ, ինչո՞ւ յես լաց լինում:
— Ե՛ւ, վո'րդի, ի՞նչ ասեմ. դարդերս նորոգվեցին,
վոր նրա գլուխ վերքը տեսա:

— Իսկ ինչո՞ւ այդ վերքը քեզ վիշտ պատճառեց:
— Իմ միակ զավակս զոհ զնաց...—ասաց նա ու
խոր ախ քաշելով լացակումած լոեց:

Յես չկարողացա համբերել. նորից հարցրի.
— Ի՞նչպես պատահեց այդ, մայրիկ:— Նա մի
տիսուր հայացք գցեց շուրջն ու սկսեց պատմել.

— Ինչպես շատ շատերը, իմ վորդի Հասանն ել
դուրս եր յեկել փողոց և ծեծում եր կուրծքը շղթանե-
րով: Այդ որը շախսեց-վախսեցի որն եր: Արյունը շա-
տրրվանի նման խփում եր նրանց գլուխներից: Գարնոն
տուավոտ եր, — շարունակում ե նա արցունքները սրբե-
լով, — բոյորը հավաքիել եյին մզկիթի դռանը և սպա-
ռում մոլլային: Յերկար սպասելուց հետո մոլլան գուրս
յեկավ և իր յերկար քարոզով կապեց հարյուրավոր յե-
րիտասարդների աչքերը: Սկսվեց մի սոսկաչի տեսա-
լորեցաբան—2

րան։ Թշնամիս ել եղ որը չտեսնի։ Քանի՛-քանիսն ար-
յունիվա գետին ընկան, ուշաթափվեցին, թե ի՞նչ ե՝ ալ-
լահի դատաստանին արժանանան։

Հենց դրանցից մեկն ել իմ տղաս եր՝ Հասանս։ Նրան
արյունիվա հազիվ տուն հասցրին։ Յերկու բոպեյից հե-
տո մեռավ։ Սե լիներ այն որը։— Մի քանի վայրկյան
լոելուց հետո շարունակեց։— դեռ ականջիս հնչում են
Հասանիս վերջին խոսքերը։— «Յես մեռնում եմ, անա՛,
բայց իմ միակ քրոջո՞ւ Սոնային լավ պահիր։ Ել չգնաս
մզկիթ, եղ անիծած մոլլաների յերեսը չտեսնես»,— ա-
սաց ու աչքերը փակեց։

Ա՛յս, եղ շախսեյ-վախսեյն ու խարերա անիծյալ
մոլլաներն ինձ նման քանիսի՛ տունն են քանդել, քա-
նիսի՛...

Նա վերջացրեց իր պատմությունը։ Գնացքը բավա-
կանին ճանապարհ եր անցել։ Յես շարունակում եյի նա-
յել ծեր թրքուհուն, վորը բարձրացրել եր պատառոտած
զգեստի փեշը և սրբում իրար յետելից դլորվող արցունք-
ների կաթիլները։

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



17. ԿՈԽԸ

Զմռան մի գիշեր կար մի հարսանիք,
հրճվում եր անզուսապ ամբոխը գյուղի.
գյուղն եյին իջել հովիվ պատանիք
աղջիկ տեսնելու, պարի ու կոխի։
Ու պարից հետո լեն հրապարակ
բաց արին մեջտեղն արձակ գլխուտան։
զուռնաշին փչեց կոխի յեղանակ,
ահել ու ջահել իրարով անցան։
Հարա՛յ են տալիս «քաշի՛ հա, քաշի՛...»
ու գուրս քաշեցին զոռով յերկուսին։
մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
անդրանիկ յեղբայր գառնարած Մոսին։
վողջ գյուղը կանգնեց պարսպի նման,
ջոկվեց, բաժանվեց յերկու բանակի,
ամեն մի բանակ ընտրեց փահլաւան,

կանգնեց թիկունքին տղերանց մեկի:
 — Սրաապինդ կացեք, մի՛ վախեք, տղե՛րք:
 իսկ նորեկ հարսի փարզի քամակից
 նայում են կանգնած հարսն ու աղջկերք:
 Ու տաքանում են տղերքը սաստիկ,
 փեշերը հովա՛ք խրում են գոտին
 դետին են դարկում ձեռքերը հաստիկ,
 իրար են հասնում թափով մոլեգին...
 Ադաթ կա սակայն են մութ ձորերում,
 ու միշտ հնագանդ հնոց ադաթին
 ամբոխի միջին իգիմն իր որում
 զետեն չի գառելու ոնկեր իգիմին:
 Ու իրար բռնած Աարսն ու Մոսին՝
 քառում են բնենում խողապարեուիկի,
 բնենում են դետին, տենում միտոխին
 դժվար ե իրրե հաղթել մեկ-մեկի:

18. ԾԵՐՈՒՆՈՒ ՀԱՌԱՋԱՆԻՑ

Մեր ապրուստն ի՞նչ ե... Ես խոր ձորերում
 Ես ե չորս քսան տարիս լրացավ.
 վոչ մի խնդություն տեսա իմ որում,
 վոչ ել մի անգամ աչքս լիացավ:

Ամբողջ ամառը առանց տաքիյեթ
 պտիտ եմ գալի ես ձորի միջին,
 կոիվս եմ տալիս հաղար ցափի հետ
 ու չեմ կարենում — չեմ հասնում վերջին:

Վաղներից ենքան ոգուտ չի գալի,
 ինչ նրանց համար յես փող եմ տալի
 դլուխր քարր, զոնե փող լիներ,
 ել ինչո՞ւ եսքան մարդ գանգատ կաներ:

Օախ եմ հավաքում, կրակ եմ վառում,
 սրա համար ել փող եմ վճարում:
 Ես դափեն ի՞նչ ե, — մի յերկու լատան,
 հինգ ու վեց անգամ տարան դատաստան:

Ասում են՝ գեջ ես կտրել դու մերին:
 Իրանցն ասում են ու քեզ չեն լուս.
 մինչեւ շտեսնես մեծին, պիսերին,
 հիմի տես նրանք ինչքան են ուզում:
 Գողն ել մի կռնից, գեյն ել մյուս կռնից.
 աչքդ թեքեցիր — բանիդ տերը չես.
 քաշում են տանից, քաշում են դոնից,
 ու չես իմանում՝ վոր կողմը թռչես:

Թե տանուտերին գանդատ եմ զնում,
 բան չեմ վաստակում՝ բացի զուշմանից.
 զողերի հետքը իր առնն ե տանում. —
 համեցեք դիվան ուզիր սրանից:

Նստեցնումե քեզ, մի յերկու բաժակ
 տաք ջուր խմեցնում կամ մի թաս ողի.
 — Գու զնա, պապի՛, միամիտ քնի՛ր,
 յես աչքի լուսը կհանեմ զողի...

Դարձել ե աշխարքն, ախակե՛ր, առուկախ,
 սերը զարձել ե սուր ու ջուրը՝ արին,
 վոչ ամոթ ունի ուժեղը, վոչ վախ —
 վայը յեկել ե տարել տկարին:

Տաբիւր — տաք կերակուր
 Դափու տաղավարիկ (տախտակից շնած տնակ)
 Լատան — բարակ տախտակ
 Գեջ — թաց փարտ
 Մերի — անտառ
 Պիսեր — գըագիր:

19. ՃԱԽԱՐԱԿ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
մանիր սպիտակ մալանչներ,
մանիր թելեր հաստ ու բարակ,
վոր յես հոգամ իմ ցավեր:

Ծիդրանիկս գուլսկա չունի,
Հանդ ե գնում վոտաբաց,
Գարբիելս չուխա չունի,
միշտ անում ե սուգ ու լաց:

Զվալ չունենք, չաթու չունենք,
վոչ սամոտեն, վոչ պարան,
այսպես աղքատ դեռ յեղած չենք,
կտրվել ե ամեն բան:

Դեռ հարս եյի, վոր զործեցի
քանի կապերտ, խալիչա,
բայց դրանցից շուտ զրկվեցի,
հիմա չունեմ մի քեչա:

Կարմիր որս, յերբ սեացավ,
պարտքը մնաց թեև քիչ,
պարտատիրոջ սիրտն ել սեցավ,
յեկավ տարավ ամեն ինչ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
մանիր սպիտակ քուլաներ,
մանիր թելեր հաստ ու բարակ,
վոր յես հոգամ իմ ցավեր:

20. ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Տաք քամին հալեցրեց դաշտերի ձյունն ու գրոհեց
շեպի Մայմեինի լեռնալանջերը. առատ ձյան հաստ շեր-
տերից ազատված գետինը չնչում եր հողի դուրալի հո-
տով, ուռել եր, փափկել:

Մի վեցորյակ ե, ինչ հինգ բրիգադան ել մեղվի
նման ներս ու դուրս եյին անում դյուղից դաշտ, պա-
րարտանյութ շաղ տալիս, ամեն մեկը գիտեր իր հողը,
իր պարտականությունը:

Իրիկունը, յերբ Սերգոն յեզների կերն եր տալիս,
բրիգադավար Մացակը յեկավ, ասաց, թե առավոտը
վարի յեն դուրս գալու, հենց վոր ազդանշան լինի՝ գու-
թանն ու յեզներն իրենց սարքով պատրաստ լինեն, վոր
հավաքվեն կոռապերատիվի առաջը:

... Մյուս որը սիգնալից 40 րոպե անց՝ ամեն ինչ
պատրաստ եր, բոլորը հրապարակումն եյին:

— Բրիգադ առ բրիգադ դեպի խարառի դաշտը,
մա՛րչ. . . . գոռաց կոլխոզի հախագահ Հմայակը ճիշտ
այնպես, ինչպես կարմիր բանակում յեղած ժամա-
նակ:

Գութանների յերկար շարանը ձգվեց գեպի դաշտ,
վողջ բազմությունն ել նրա յետեից:

Համզաչիմանն այդպիսի բան իր որում չեր տեսել:
Սերգոն ուրախությունից արտասվում եր:

Վորոշեցին փորձնական վարն սկսել դալրոցի հողա-
մասում:

Հինգ բրիգադաների առաջին ողակները բաց տրին
առաջին ու ակոսները, տասնհինգ գութան միքանի րո-
պեյում սեացրին դաշտը: Յեզները խամացել եյին ու
դժվար եյին լուծը քաշում, ծոռմ եյին գութանն աշ ու
ձախ:

Համզաչիմանի կողիովն առաջին քննությունը բըռ-

նեց, փորձնական վարը հաջող անցավ: Հրահանդ տրիեց
վարը դադարեցնելու:

Գյուղամիջում բացվեց բազմամարդ միտինդ. գու-
թանավորներին ընդունեցին ուռաներով: Յերբ կարդա-
ցին պարզեատրվողների և խրախուսանքի արժանացող-
ների ցուցակում Սերգոյի անունն ել, Սերդոն բարձրա-
ցավ սայրի վրա ու ասաց.

— Ընկերներ, մենք հիմո չե, զոր մբցանակ պիտի
ստանանք. յերբ ցանենք, զնձենք, կալսենք, շտա բնրք
ստանանք, են ժամանակ տվե՞ք իմ մբցանակը:

21. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յելի՛ր, ում կյանքը անիծվել ե,
ով ճորտ ե, մերկ ե և սորուկ:
Արդեն վառվում են մեր սրաերը,
արդին կոմի յենք մենք ձգտում:
Յյու հին աշխարհը կփորենք մենք
մինչև հիմքը և հետո
մեր նոր աշխարհը կշինենք մենք,
ուր վոչ սարուկ կա, վոչ զժզոհ:
Սա՛ յե վերջին կորվը
և պայքարը մեծ:
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

Առաջ մոք չի տա մեր փրկությունը,
մոչ խենթ հերոսը, վոչ արքան.
մենք պետք ե մեր ազատությունը
կունք ձեռքով մեր սեփական:
Վորոյեսզի շուտ փշրենք մեր լուծը
և յետ խլենք վողջ հողը մեր—

Ղսկե՛նք մուրճը, տա՛նք մեր ուժը
քանի յերկաթր տաք ե գեռ:
Սա՛ յե վերջին կորվը
և պայքարը մեծ:
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

Լոկ մենք, ճորտեր ու բանվորներա-
ունենք անխախտ մի իրավունք՝
ասել, զոր հողը մե՛րն ե, մերն ե Կ
կորչի հարուստը թող տօրուկ:
Յեվ յերբ պայթի մեծ փոթորիկը,
և կուշտ յներբ չքանան,
նորից յերկիրը և յերկինքը
մերն են ու մերը կմնան:

Սա՛ յե վերջին կորվը
և պայքարը մեծ:
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

22. ՄԻ ՈՐԱՎԱՐ ՀՈՂ

Սոնան և իր ամուսին Մարտիրոսն աղքատ գյուղա-
ցիք ելին: Ունեյին—չունեյին՝ մի զույգ այծ, վորոնց
կաթով ապրում ելին, մի ճախարակ, վորով Սոնան
բամբակի թել եր մանում վաճառքի համար, և մի բահ,
վոր ամեն որ վաղ առավոտյան Մարտիրոսն ուսին
դրած՝ զնում եր գյուղամեջ և այնքան վիզը ծռած
կանգնում, մինչև վոր դրացինեցից մեկը՝ միքանի կո-
պեկ վճարելով՝ վարձում եր նրան և ամբողջ ոլը բա-
նեցնում իր զաշտում:

Այսպիսի դառն աշխատությունը գարձալ գոհ ելին
նրանք, յերբ կարողանում ելին իրենց խցճիթի մեջ

Հանդիստ քուն վայելել: Իսկ այդ բախտը խիստ սական էր հաջողվում նրանց:

Մի որ Մարտիրոսին իր մոտ կանչեց գյուղատեր խանի վորդին՝ Ռիզա բեկը:

Յերկյուղից խեղճ գյուղացու շունչը կարվեց մինչեւ խանի վորդու մոտ հասնելը. բայց տեսնելով նրա ուրախ դեմքը, աղաւու շունչ քաշեց և մինչեւ գետին խոնարհվելով՝ յերկրապագեց նրան:

— Ի՞նչո՞վ ես պարապում, Մարտիրոս, — հարցրեց Ռիզա բեկը:

— Աղքատի պարապմունքն ի՞նչ պետք ե լինի, աղա՛, վոտիդ մոխիր գառնամ: Որը դադում եմ, որն ուտում, — պատասխանեց գյուղացին կրկին գլուխ տալով:

— Դու ուժեղ և առողջ տղամարդ ես, Մարտիրոս, դու կարող ես ունենալ քո արորը և որավարը, վոր պարապես հողադործությամբ:

Մարտիրոսը չդադարելով գլուխ տալուց՝ պատասխանեց: —

— Յես աղքատ մարդ եմ, աղա՛, քեզ մատաղ դառնամ:

— Հիմար, — Հպարտությամբ գյուղացու խոսքը կտրեց բեկը. իմ հպատակներից ո՞վ ե հարուստ. բայց յես տալիս եմ նրանց հող, սերմ և բոլոր պարագաները, վորոնք հարկավոր են վարուցանքի համար, և նրանք դրանով ապրում են:

— Դուք միշտ վողորմած եք դեպի ձառաները, տեր իմ:

— Յես քեզ նույն նպատակով կանչեցի ինձ մոտ Յես գիտեմ, վոր դու աշխատավոր մարդ ես: Յես չեմ կամենում, վոր դու առօսատ տպրես: Գնա տանտեսում մոտ, յես հրամայել եմ նրան տալ քեզ բոլոր պիտույքները վարուցանքի համար:

— Աստված քեզ յերկար կյանք տա, աստված իմ կյանքից կտրի ձերի վրա ավելացնի, — ասաց գյուղացին և չնորհակալությամբ հեռացավ:

Գարնան սկիզբն եր:

Մարտիրոսի յերգի ձայնն արդեն լսելի յեր լինում դաշտից, ուր նա հերկում է իր որավարը:

Միքանի շաբաթից հետո նրա ցանքն սկսավ բուռնել, կանաչել և աճել: Բայց նրա հետ աննկատելի կերպով աճում ու բազմանում եր տոկոսը նրա պարտառոմսակի, վոր նա տվել եր խանի վորդուն:

Անցավ ամառը, յեկավ աշունը: Մարտիրոսը հնձեց իր արտը, կալը կալսեց և զուտ ցորենի շեղջր կիտեց կալի մեջ: Ուրախությամբ նայում եր իր հունձքի պըտդուերության վրա:

Յեկավ կալվածատիրոջ գործակալը, ցորենը չափեց, տասնորդը վեր տռապի վորպես հողի վարձ, մի մասը վեր առափ դիվանի տուրքի փոխարեն, մի մասը վեր առափ նրա պարտիքի տոկոսի փոխարեն: Կայի մեջ մնաց միայն հարդը և այնքան ցորեն, վոր բավական չեր խեղճ յերկրագործի նույն ձմեռվա ապրուստին:

— Ի՞նչո՞ւ յես այդուհաւ տիսուր, — հարցրեց կինը:

— Այնպես, քեֆս տեղը չի, — պատասխանեց Մարտիրոսը:

— Ասա, ի՞նչ ե պատահել, հիվա՞նդ ես, ի՞նչ ե:

— Եհ, ել ինչ պետք ե լինի: Ամռաղջ տարին աշխատեցի, մաշվեցի, ելի դատարկ մնացի:

Յեզ Մարտիրոսը պատմեց կնոջը, թե ինչպես այդորը կողոպտեցին իրեն:

— Գոնե պարտորդ թափեցի՞ր, — հարցրեց կինը:

— Պարտօքը ելի մնաց այնպես, ինչպես կար, — պա-

տասխանեց Մարտիրոսը, խոր Հոգոց Հանելով։
— Հիմա ինչ պետք ե անես։

Անցան մի քանի դարուններ։ Անցան մի քանի աշուններ։

Գյուղից գուրս, իր փոքրիկ յերեխան կրծքին սեղմած՝ կանգնած եր Առնան։ Արտասուրն աչքերին, նաճանապարհ եր զնում ամուսնուն դեպի ոտար աշխարհ։

— Կգնամ, Սոնա, յերկրե-յերկիր ման կգամ, կմաշվեմ, կկոտորվեմ, փող կվաստակեմ և կաղատեմ քեզ և իմ յերեխան պարտատերից, — ասաց իւեղմ գյուղացին և համրուրելով տղի յերեսը, հեռացավ դեսի սղանդխտություն։

23. ՈՒԽՇԱՆԻ ՔԱՐԱՓԸ

Զաթնանց գերդաստանն անհուշ որերից
յեղել ե գյուղում անվանի, հարուստ։
Նա զավթել ե միշտ լավիր հողերի։
Յորենն ե փուել Զաթնանց ամբարում։
Աձել ե ժամ ու ամպուհովանու տակ,
վորպես դարափոր մի բնկուզենի։
Փոելով գյուղում արմատներն անտառ՝
ծծել ե նրա հյութը վայրենի։
Երիել ե, գյուղում վորպես տանուտեր,
վորպես մի վարի կառափարություն։
Ենի կուչ ե յեկե, թշվառ գյուղացին
Զաթնանց դարափոր բնկուզենու տակ՝
աշքերը հառած ավելցուկ հացին,
իր վողորմելի բախտին անդիտակ։
Իսկ Զաթնանց Սանթրոսն անողոք բահով

Շեղքել ե գլուխն աղքատ մուշանի,
հափշտակել ե ընտիր սեահողն
ու սովի մատնել մի տուն ընտանիք։
Մեռել ե մուշանն եղ վերքից հետո
և ման ե յեկել Սանթրոսն անպատիժ,
դատարան մտած հիսուն մանեթով
դարձել ե չհաս, չենթակա դատի։
Չափթել են այսպես ու կերել մարսել
Չաթնանք մուշանի հողը բերքառատ։
Բայց հին անունն ե վրան մնացել.
Գյուղում ասում են «մուշանի քարափ»։

Հ Ա Ր Ց Ե Ր

- Վեր շրջանի գրվածք և «Ի՞ո շանի քարափ»։
- Հին կարգերում լավ հողերն հւա ելին պատկանում։

24. ՈՒՂԻԼ ԺԱՄԻ ԶՈՐՍԻՆ

Հունվարյան ցուրտ որ եր. փողոցում յեռում եր կյանքը։ Քաղաքային բանկի գուռը դանդաղ բացվեց և դուրս յեկավ կոկորդի հագնված մի մարզ։ Նա պորտֆելը ձեռքին ինչ-մոր տեղ եր շտապում։

Դրսում նրան սպասում եր ավտոն. չոփերը նրան տեսնելուն պես աշխատացրեց մեքենան, իսկ պորտֆելավոր մարդը ծանրորեն բարձրանալով ավտոյի վրա, չոփերին ինչ-մոր հասցե պատմիրեց։

Սա տեղի յեր ունենում Յեվրոպայի քաղաքներից մեկում, վորտեղ շատերն իրենց սեփական ավտոներն ունեն։

Այս պորտֆելավոր մարդը միստը Հեղն եր՝ անգլիական հայտնի առևտրական։

Նա մեկնում եր մի ուրիշ քաղաք, վորտեղ պետք են մասնակցեր մի կարեօթ խորհրդակցության։

Միստըր Հեղն այդ խորհրդակցությանն անպայման
պետք է մասնակցեր, հակառակ դեպքում նրա առևտրա-
կան գործերը կատանային վտա ընթացք։ Պետք է մեկ-
նել անպայման առաջին իսկ զնացքով։

Հիմա ժամի յերեքն ե, և ազատ կարելի յե տոմս
դնել։

Իսկ ավտոն արագորնթաց ալանում եր յեվրոպական
քաղաքի հարթ փողոցներով։

Միստըր Հեղը, վորի գլուխը շատ մտածելուց ծան-
րացել եր, աչքերը հանդարտ փակած ննջում եր։

Հանկարծ մեքենան կանդ առավ. փողոցի ափին
միստրը Հեղը վեր թռչելով աչքերը լայն բացեց։

Նրա գիմադ գլուխը բաց կանգնած եր շոֆերը։

Միստըր Հեղն արագորեն մեկնեց թևը և նայեց ժա-
մացույոհն. ժամի չորսն եր։

— Ի՞նչ պատուհեց, — հարց տվեց նա շոֆերին։

Շոֆերը գլխարտ հանդած, ձայն չեր
հանում։

— Հա՞մը ես ինչ ե, — վորոտաց սրանեղած Հեղը. —
զնացքից ուշանում ենք։

Այն ժամանակ շոֆերը չըջվեց, և միստըր Հեղն սո-
ուածին անգամ իր կյանքում տեսավ, վոր զարմացած
նայում են իրեն։

— Հունվարի 27-ին, յերեկվա ժումը 4-ին թաղում
են Լենինին. Յերթեկությունը կանդ ե առնում. . .
Հինգ րոպե. . . սրբ. . .

Միստըր Հեղը շփոթվեց, ձեռքի մեջ ճմոեց սիդա-
րը և լցվեց անասելի կատաղությամբ։

— Վաղն և յեթ գուրս, — ճչաց խոպոտ ձայնով միս-
տըր Հեղը և կրծտացրեց ատամները։

Շոֆեր կիրային վոչինչ չպատասխանեց, նա անշարժ
նստած եր զեկի մոտ և նայում եր հեռուն։ Քամին խառ-

նում եր նրա մազերը և նրա մտքերը տանում հեռու. . .

Միստըր Հեղը կարծես պայթեց։

— Հազար ֆունտ, գնա' . . .

Շոֆերն անշարժ եր։

Յերբ ժամացույցը ցույց տվեց չորսից անց հինգ
րոպե, շոֆեր կիրային գլխարկը դրեց, ճկույթով սեղմեց
կնոպկան։ Ավտոմոբիլն առաջ սլացավ։

Միստըր Հեղն իր գլխում զգում եր մի ծանր ճնշող
ցավ։ Մարմինը կուչ եր յեկել ավտոմոբիլի փափուկ
բարձերի, ճմուած սիդարի մոխիրով ծածկված վերար-
կուի մեջ։

25. Լ Ե Ն Ի Ն

Այն ո՞վ ե նստել խարխուլ խրճիթում հնդիկ գյուղացու,
այն ինչ ե պատմում հնդիկին անհող մտերիմ և կուռ
ձայնով. . .

Այն ո՞վ ե շրջում Շանհայում շաչող, անցնում կանտոնից
Պեկին,
այն ո՞վ ե քայլում կուլիների հետ վճռական, ոմբոստ,
մեկին. . .

Այն ո՞վ ե վառել խարույկ մի հսկա բյուր հոդիների
սրտում,
այն ո՞վ ե բացել հրդեհ մի լափող հին Արևելքի ուր-
տում. . .

Յեկ վորոտագին թնդացին հանկարծ ձայները միինոն և
մին.

— Միկոնից ծնված, միլիոնի հանճար Լենինն ե, Լե-
նին, Լենին. . .

26. ՀԱԶԻՔԵՆԻ

Յերկաթուղու կայսրանի այն կողմը փուլել և Գյաննան: Յերբեմնի արյան և կոտորածի, ազգամիջյան ջարդերի այս որբանը, աշխատանքի հսկայական մեղվանոցի յի փոխվել:

Հին Գանձակն ել չկա: Հսկայական կամուրջով հայն ու թուրքն իրարից բաժանող Գանձակն ել չկա:

Բարձրանում ենոր, ստեղծագործող ու շինարար Գյանջան:

Այստեղ վիթխարահասակ չինարիներն են ձգվում, բայց չինարիներից ավելի հաստատ ու փառավոր, յերբեմնի արնարվա այս հարթավայրում բարձրանում են ձեթ-ոճառ գործարանի, մահուդի գործարանի, սերմագուի կայանի, բանվորական բնակարանների նորակառուց ու ժպտացող շենքերը:

Նրա բորբոսնած մզկիթների ու ժանտաղեմ յեկեղեցիների դիմաց բարձրանում են աշխատանքի և սոցիալիստական փառավոր պալատները:

Գանձակում, կավաշար ու քարակոփ պատերի ուսերից ժպտում են արնագույն նոնենիները: Նույն կարմրավառ ժպիտը բակերում, այդիներում:

Գյանջան ժպտում ենուան կարմրավառ ծաղիկներով.—

Ուր ցարական անհետացող Յելիղավետապոլը, ո՞ւր մուսավաթական արնախում Գյանջան, ո՞ւր բայլէլիկ-յան ստեղծագործ ու բարձրացող Գյանջան:

Նոնենիները ժպտում են: Նոնենիները կարմիր գրոշշակի պես փողփողում են վողջ Գյանջանի վրա, իսկ այս-տեղ բանվոր դասակարգը կերտում ենոր ու փառավոր աշխարհը:

Խաղողի այգիները փովում են Գյանջայի շուրջը, ուղեկցում ճանապարհի յերկայնքով:

Խաղողի թփերն ուղեկցում են: Մեր մեքենաները թողնում են Գյանջան և անցնում գերմանական փոքրիկ ավանի, նախկին Յելենդորֆի, այժմ յան Լենինգորդի:

Հասարակական փոքրիկ պարտեզի անհանգիստ շատրրվանի ջրե ճառագայթների միջից, ժպտում ե հանձարեղ առաջնորդի կիսանդրին:

Միանման ու գեղեցիկ տները շարվել են լայն փողոցներից աջ ու ձախ:

Մեքենաները թողնում են և Լենինգորդը:

Հաջի-Քենդ ենք գնում: Աղբբեջանի կարմիր դիվի-ղիայի ճամբարը:

Դարձյալ վերելք ե նկատվում և ծայր են առնում անտառների կանաչ փեշերը:

Թուրք, ոռւս, հայ կարմիր բանակայինները, հրամանաւարները ջերմագինորեն վողջունում են Հայաստանի խորհրդային դրական բանակին, վորը գնացել եր նրանց այցելության:

Խանդավառությունը ծավալվում ե և թնդանոթները կարմիր բանակայինների հազարավոր բերանների հետ միասին վորոտում են—ուռուա՛... կեցցե՛... յաշա՛սըն...

Կատարվում ե զորահանդես:

Հայաստանի գրողները շարքով կանդնած ընդունում են վողջ դիվիզայի հանդիսավոր զորահանդեսը: Նրանց մարտական լոգունզները հրահրում են կարմիր բանակայինների խանդավառությունը:

Վերադառնում ենք: Անտառների կանաչ ծվանը ընդունում ենք կապույտ պարը, սպիտակ վրանաշխարհը մեզ ճամբու յեն գնում ։

27. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԵՒՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԼ

Նա տուն եր դաշիս կարմիր բանակից։
Են բատրակ տղեն—անունն Ալեքսան։
Գրքերով լեցուն մի պարկ շալակին
ու դոչին կարմիր աստղաձև նշան։
Մի անծայրածիր աշնան յերեկո
փռվել եր անափ դաշտերի վրա։
Ծեկ Ալեքսանի սիրտը թե առած
ուզում եր թռչել մաշխինի հեքով
ու տուն օլանալ իրենից առաջ։
Նա քանի գնում, մոտենում եր տան։
Անցնում եր ծանոթ արտերի մոտով,
լցվում եր ենքան անհուն կարոտով,
սիրտն անհամքեր զարկում եր ենքան։
Կարմիր բանակից նա դալիս եր տուն,
խորունկ մտքերով վառված են տղեն,
Սրտում յերկու բռց, յերկու վառ յերդում,
շուրջը—յերեկո, մշուշ վոսկեղեն։
Յերդվեց յերեկ։
Բանակում հանդես ու միտինգ արին։
— Յես խոռք եմ աւալիս կյանքս նվիրել
ընկեր լենինի մեծ զաղափարին։
Յեզ նրա քարե մեհ արձանի դեմ,
Լենինյան կարմիր դրոշի ներքո
նոռնք յեռդմեղին, կոմիտ, ա, խոտել
կոլեկտիվ սրտով—կոլեկտիվ ձեռքով...

28. ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄ

Ալմաստի գլխում հա պտույտ եր դալիս «ինդուստրացում» բառը։ Բայց նա այդ բառը տեղը բերել չել

կարողանում։ միտքն ել պարզ չեր պատկերացնում։ Նու-
խաճաշի գաղաքի ժամանակ նա դիմեց կին հրահանգչու-
հի Հայկուշին՝

— Հայկուշ ջան, դլուխս չի մտնում այս բառը, մի
բացատրե՛ս։

Հայկուշին ել եդ եր պետք։ Խոսել սկսելուն պես՝
մյուս բանվորուհիներն ել գլխին հավաքվեցին։

— Ընկերներ, որեցոր աճում ե ապրանքի պահանջը։
Գյուղը պահանջում ե տրակտոր, ելեկտրական լամպ։
Դրա համար մենք պետք ե ունենանք գործարաններ,
ելեկտրոկայաններ։ Բայց վո՞րտեղից ձեռք բերենք, ին-
չո՞վ փոխարինենք մաշված մեքենաները։ Դրսի՞ց բե-
րենք։ Բայց մենք դրա համար կապիտալիստներին հոկա-
յական քանակությամբ վոսկի պիտի վճարենք։ Սախ-
ված կլինենք չնչին գնով ահազին հում նյութ և այլ
մթերքներ տալ նրանց։ Ուրեմն մեզ մնում ե, վոր ինքներս
մեքենաներ պատրաստենք։ Այդ գեպքում մենք կախ-
ված չենք լինի արտասահմանից։ Ինդուստրացումն ել
ճենց այդ եւ։

Խորհրդային իշխանությունը Հենց այդ ուղին ել
ըստնել ե։ Դժվար զործ ե, մեծ ծախս ե պահանջում։ Դրա
համար մենք շատ խնայող պետք ե լինենք ամբողջ տրն-
տեսության մեջ։ Մենք շատ բան կարող ենք անտեսել։
Մենք մի աշխատավոր պետք ե մտածի—չի՞ կարելի ար-
դյոք իր արտադրության մեջ ավելորդ ծախսերը կրծս-
տել և գործն այնպես կազմակերպել, վոր լում և շատ
արտադրովի, և արտադրանքի ինքնարժե օն իջնի։

Զանգը հնչեց։ Դադարը վերջացավ։ Ամեն մեկը վա-
ղեց իր աշխատանքին։

29. ՇՉՈՒԿԱՐ ՊԱՊԾ

— Ու, զավակներ, բարեկամներ, հավատացեք,
քիչ մնաց ձեռքից գնայի։ Յերկու որ ե, վոր փարախից

գուրս չեմ յեկել, շալվարս հենց ենպես ձեռքերիս մեջ
եյի կրում... ենպիսի փորի թուլություն սկսվեց, վոր
զսպել չեր լինի: Կարծես նիհարել եմ, հոսում եր վորպես
սագի տկար ձագից:

— Մի՞ս ես խժուել:

— Մի՞ս...

— Հո՞րթդ ես մորթել:

— Ել չկա հորթուկս... ինձ ոգուտ չբերեց նա...

Մակարը բղավեց, ատելությամբ նայեց պապին,
ատամների միջից բաց թողեց:

Ահա կվոնդենք կոլխողից, են ժամանակ ել եղքան չի
խոսի: Ինչո՞ւ յես մորթել:

— Մեղք արեցի, Մակարուշկա... Պառավս հա-
մողեց, ախ գիշերվա կկու, նա միշտ կկանչի... Դուք նե-
րող յեղեք... ընկեր Դավիդով: Մենք իրար հետ մտե-
րիմներ եյինք, դուք ինձ միք հեռացնի կոլխողից: Յես
առանց եդ ել բավական տանջվել եմ:

— Դե, սրանից ի՞նչ պահանջես,— Նագուլովը
ձեռքը թափահարեց:—Գնանք, Դավիդով: Եյ, դու-
չիվանդ, հրացանի յուղն աղի հետ խառնէր ու խմիր,
ձեռաց կանցնի:

Եռուկար պապի զբունքները վիրավորված դողա-
ցին:

— Վրես ծիծաղո՞ւմ ես:

— Ճիշտ եմ ասում: Մենք հին բանակում մեր փո-
րացավիզ հենց գրանով երինք փրկվում:

— Յես ինչ, յերկաթի՞ց եմ, ի՞նչ եւ ինչով վոր
անշունչ հրացանն են մաքրում, դրանով եր յես պիտի ոգ-
տրվեմ: Չեմ անի: Ավելի լավ է մեռնեմ արևածաղիկնե-
րի մեջ, բայց յուղ չեմ բնդունի:

Ետև յալ որր բոլորովին ել չմեռնելով Եչուկար
պապին արդեն մի եերպ քաջ, եր գալիս դյուղակով և պատ-
մում եր յուրաքանչյուր հանդիպողին, թե ինչպես իրեն

Հյուր եյին յեկել Դավիդովն ու Նագուլովը, ինչպես
նրանք իրենից խորհուրդներ եյին հարցրել վարի առ-
թիվ, դործիքներ նորոգելու մասին և կոլտնտեսային այլ
Մի ըստե կանդ առավ... նայեց հեռուները... լիտ-
ուատ թոքերով ազատ չունչ քաշեց և գլուխը կախեց...

Այս որվանից իվանեն թողեց դաշտն ու մանդադը
և հրացանը ձեռք առնելով՝ գնայ միանալու հեղափո-
խականներին:

ՀԱՐՑԵՐ

- Գլուգան վո՞ր խավի ներկայացուցիչն ե Իվանին:
- Վո՞ր ժամանակաշրջանին ե վերաբերում այս հոդվածը. ին-
չի՞ց ե այդ լեռնում:
- Ինչո՞ւ ելին ողում իվաներին բանտարկել. Որենքը վո՞ր դա-
սակարգին եր պաշտպանում:

60. ԲԱՆՎԱՐՈՒԽՈՒ ՈՐՈՌԸ

Մի' լար, վորդիս, վոր չես լսում
ել մայրական քաղցր որոր.
յես մեծ կովի յերգն եմ հյուսում,
որոցքիդ մոտ ամեն որ:

Դու լսո՞ւմ ես — այնտեղ՝ գրսում
շաչ ու շառաչ, լաց ու կոծ —
մեր արյունն ե այնտեղ հոսում՝
ներկած և՝ տուն, և՝ փողոց:

Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ,
բանվոր գնդեր ահարկու,
քաջ մղում են մի մեծ կոփի —
աշխատանքի և վոսկու:

Այնտեղ հայրեր, այնտեղ վորդիք
մի նոր կյանքի յեղերքում,
վորպես մի-մի հերոս մարտիկ
մահ են դրկում ու յերգում...

Մի' լար, վորդիս, վոր չես լսում
ել մայրական քաղցր որոր.

յես մեծ կովի յերգն եմ յերգում,
որոցքիդ մոտ ամեն որ:

ՀԱՐՑԵՐ

- Ինչ ամեծ կովի մասին ե ասված ալստեղ:
Վո՞ր դասակարգն ե օգոսկու» կումը, վո՞րը՝ «աշխատանքի»:
- «Այնտեղ դրսում» ը վո՞ր յերկոներին ե վերաբերում ալժմ:

61. ՄԵՐ ՃԱՄԲԵՆ ԿՈԼԽՈԶՆ Ա, ԿՈԼԽՈԶԸ

...Մուեսն յերբ ուշքի յեկավ, աղջիկը չկար:
Ողայի լուսամուտից Մուեսը դուրս նայեց ու տե-
սավ, վոր ձյուն ե զալիս: Ձեռքերին նայեց, չանգուս-
ված եին: Հետո ատամները կրճտացնելով վեր կացավ
խսիրով ծածկված յերկար թախտից ու կնոջը կանչեց,
վոր դոմում աղբն եր ավլում:

— Ո՞ւր գնաց Մանուշը:

— Հանդիստ չպիտի՞ թողնես աղջկան: Խո պըս-
տիկ չի:

Մուեսն աչքերը խստացրեց, ըստ սովորության
ունքի մեկը բարձրացրեց վեր, բայց վոչինչ չպատաս-
խանեց, միայն շալե վերնազգեստի ոճիքը բարձրացրեց
և դուրս յեկավ:

Հինգ ամիս եր, ինչ Հ... գյուղում կոյեկտիվ եր
կաղմակերպվել 35 տնտեսությունից բաղկացած:

Որ-որի վրա մեծանում եր ու աճում: Գյուղացիներն
սկսել են հասկանալ կոլեկտիվ կյանքի նշանակությու-
նը:

Կոլեկտիվը մեծանում ե, կուլակ Գալուստն անհան-

գըստությամբ ե թարթում իր աչքերը:

Մուեսը միջակ գյուղացի յեւ թերահավատորեն ե
վերաբերյում կոլեկտիվի հաջողություններին: Նա մի-

դուրս ե յեկել նրա հարկի տակից, Գալուստը ժայռացել ե խորամանկորեն և չնշացել.

— Մոսեսն ել չի մտնի կոլիսոզ:

Մոսեսի ընտանիքում խռովությունն սկսվեց այն որից, յերբ նրա աղջիկը՝ Մանուշը հորից պահանջնեց կուեկտիվ մտնել: Սկզբում նա հորը համոզում եր, բայց վերջինս քիչ ուշադրություն եր դարձնում աղջկա տառածննրի վրա, վորովհետեւ Գալուստի ամենորյա հորդորներն ուժեղ ելին:

Մոսեսի աղջկան—Մանուշին ընկերները միշտ նախառում ելին, վոր նա ընտանիքին չի կարողանում համոզել ու բերել կոլիսոզ:

Բացի դրանից, չանհ վճռականություն և յետ և մնում... Նամանավանդ Մանուշի սիրոր ծակում ելին բջիջի քարտուղար Գարեգինի նախառինքները:

Մանուշը լուռ եր, վոչինչ չեր կարողանում պատասխանել Գարեգինին, վորովհետեւ զգում եր, վոր նա ճիշտ է խոսում:

Նա տանը դարձյալ տանում եր բացատրական աշխատանք: Մայրն արգեն անցել եր իր կողմը, բայց Մոսեսի համաձայնությունն անկարելի յեր, վորովհետեւն կույակ Գալուստը չեր դադարում թունավորել նրա միտքը: Յերբ Մանուշը տեսավ, վոր իր բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում, ստիպված յեղավ հարցը զնել վճռական կերպով:

— Տվե՛ք ես տանից, ինչ վոր ինձ հասնում ե, յես կոլիսոց եմ զնում:

Մոսեսն աչքունքը բարձրացրեց, ոռոնզները լայտ նազան, իսկ ձեռքերն սկսեցին դանդաղկոտությամբ առհել ոտիստի ուիսերի վրայով:

— Ինչ ասի՞ր, — ասոց նա համարյա անլսելի, բայց իտպու ձայնով:

— Գնում եմ կոլիսոզ...

Կատաղած Մոսեսը բռնեց աղջկա ձեռքերը և սկսեց վոլորել: Վրա հասավ Յեղասն և սկսեց Մանուշին ոգնել:

Մանուշը չանդուեց հօր ձեռքերը և մի կերպ աղատվեց, Հրելով նրան թախտի վրա. նա դուրս թռամի ոգացից և ինքն ել չիմացավ, թե ինչպես ընկալ կոլիսով դրասենյակը:

Ենչասպառ նա դիմեց նախագահին.

— Մինա՞ս, Մինա՞ս ջան.. ինձ կոլիսող գըի. ել չեմ կարող համբերել:

Մինասը ժպտաց.

— Դիմում զըի, — ասաց նա:

Մանուշը չտեսավ, վոր զբանենակի անկյունում ժպտում եր նաև Գարեգինը:



Պայծառ զարուն եր: Արեի տակ ծփում են կոլիսովի զաշտերը: Նրանք սրտարովի սպասում են, սպասում են մի մեծ «հրաշքի», բարախում և կոլիսողնիկների սիրտը:

Հեռվից վրնջաց յերկաթե ձին՝ տրակտորը: Թնդաց ուռուան, բարձրացավ կարմիր դրոշը ու ծածանվեց քամու ալիքների տակ:

Մանուշը բռնել ե դրոշակը, նայում և մոտեցող տրակտորին:

Պայծառ զարնանը, պայծառ արեին ու պայծառ որերին ժպտում ելին կոլիսողնիկները:

— Ուսու՛, կեցցե՛ տրակտորը:

— Անիծմի՛ նա... մըմնջաց կուլակ Գալուստը և նորից դիմեց Մինասին:

— Տո՛, ի՞նչ կա եղ տրակտորի մեջ, վոր եղաւս զարժացի, են. վոր ունենա, գու ել կարաս տոնի:

— Ասում ես Ելի, Գալուստ. ախար աչքեր ունեմ, Մարդիկ կարդին աշխատում են ու մարտեսնում եմ: Մարդիկ կարդին աշխատում են ու մար-

դավայել ապրում։ Հիմա ել խո տեսնում ես, տներ են շինում կոլխոզնիկների համար։ Համ ել կոլխոզն ահա-դին մեծացել ե. ասում են՝ վաթսուն տնտեսություն ա-դառել։

Գալուստը դժգոհ, աչքերը կկոչեց։

— Եղ դիմին աչք կապելու համար ե. որանց բայլչեիկ կասեն։ Ենքան խորամանկ են, վոր քեֆդ դա։

— Ե՛ Գալուստ, ջիոյարդ երէված ե, ենդուր ես եղակն խոսում։ Համա յես, ի՞նչ . . . միջակ գեղացի յեմ, աղջիկս ել հրեն կոլխոզումն ա, աղբեր, տեսնում եմ, վոր մեր ճամբեն կոլխոզն ա, կոլխոզը։

...Ու այդ գիշեր անկողնում պառկած, Մոսեսը յերկար միտք եր անում, նախքան քնելը. Մոսեսը մբմըն-ջայ։

— Մանուշը դրուստ եր ասում։

— Բնկերնե՛ր, ընթացիկ հարցերում կարդում եմ կոլխոզ մանել ցանկացողների միքանի դիմում, —խոսեց կոլխոզի նախագահ Մինասը։

«Մտալին»-ի անվան կոլխոզին

Դիմում

Հոնախոան դյուզի բնակիչ Մոսես Կարապետյանից և ինդրում եմ ինձ, վորպես միջակ գեղացի, ունենալով 1 կով, 2 յեղ, 1 աչառ ընդունեք ձեր կոլխոզական շարքերը։ Խնդրում եմ դիմումս չմերժեք։

Դիմում եմ (ստորագրություն)

Ժողովատեղում լսվեցին բուռն ծափահարու-թյուններ։ Մանուշն ուրախությունից թուավ տեղից և համբուրեց հորը. — խելքի՞ յեկար, հայրի՞կ։

— Հա՛, ախաղեր, միջակ գեղացի յեմ, խոմ կուլակ չե՞մ, մեր ճամբեն կոլխոզն ա, ե՛, կոլխոզը։

62. ՏԵՄՊԵՐ

Հեռում ե հուժկու Մակեյեվկայի մետալուրդիական գործարանն ահա, դարպանների մոտ հեղեղ մարդկային, հեղեղում կանգնած մի ծերուկ պահակեկ։ Դեմք, կենտրոնում ընդարձակ բակի, կախված ե մի լայն վիթխարի տախտակ, վոր հարյուր քայլից կարող ես կարդալ։ Այդ հոկայական տախտակի Փոնին վերևից ներքե նկարված ե վառ

այնքոպլան,
ավտո,
գնացք,
հեծանիվ
հեծյալ,
վոտավոր,
փուրգոն,
արաբա,
ծանրաբեռ մի եշ,
կրիս,
խեցետին,
ամենից ներքեւ,
խխունչ մի հետին։

Ամեն մի նկարն այդ տեսարանի ներկայացնում ե մի ցեխ, մի ճակատ։ Հանդիսանում է տեմպի չափանիչ, չափանիչ փառքի և հերոսության։

63. ԱՍՐՈՅԻ ՄԱՀԸ

ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
յերկնքի մթնած ամպերից իջներ,
ինչպես փոթզրիկ սաստիկ սրբնթաց,
դյուզից ոլացան մի խումբ կտրիմներ։
Յավից տաքացած ել բան չեն հարցնում,
թռչում են, ասես, ահից հալածված,
ու նրանց առջև ահուելի բացվում,
թշում ե ձորը արյունով լցված։
Դյուզը դատարկվեց մի ակնթարթում,
քարափի գլխին կանգնած անհամ բեր,
լուռ, սրտատրոփ ականջ են զնում,
նայում են ներքեւ... ձեն չի զալի գեռ։
Դերեղն ե մենակ անդնդում հուզված
խլածայն վողրով սողում դեպի ցած։
Ու մարդասպանը դուրս յեկավ ձորից,
դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր
սարսափ ե կաթում արնոտ աչքերից,
և կերպարանքը փոխված ե բոլոր։
Առանց նայելու մարդկանց յերեսին,
առանց խոսելու, սեակնած, զաժան,
մոտեցավ սրահին, կախ տվավ սնին
աև հրացանը՝ սև ոճի նման։
Վոչ վոք ծպտայ չի համարձակվում,
մենակ մի հոգի, անզուսպ կատաղած
հարա յե կանչում, յերեսը պոկում։
Մեռած չորանի պառավ նանն ե նա՝
ցավից խելագար բառաչում, լալիս.
տարտար խոտ ձնող, վազում ե ահա,
ձորիցն ե տիսուր գոռացը գալիս։
Սդավոր կանայք նրա յետից
հարայ կանչելով ձորը վավեցին։

իրենց կորցրածն ել հիշելով նորից³
դիակի շուրջը կարգով շարժեցին։
Իդիթին վայել սրտառուչ վորրով
լաց ու կոծ արին՝ ձեն-ձենի տված։
տղերքն ել մթին, լուռ ու գլխակոր,
մնացին մոտիկ քարերին նստած։
Վողրացին անշունչ դիակի վրա՝
անտեր մնացած վոչխարի մասին։
անսիրտ անեծքով հիշեցին նրա
անձար մնացած խեղճ յարի մասին։
Յեկ նրա մասին, վոր ընկերները
Հանդը գնալիս՝ Սարո կկանչեն,
վոր սարից փախած սոված չները
կուրքը պիտի վոռնան, կլանչեն։
Յանր չոմբախը, գլուխը մեխած,
ոճորքում գրած պիտի մըոտի,
յերկար խոնչալը պատիցը կախած,
ոպտենում մնա ու ժանդը պատի...
վոր հով սարերի սովորած նանը
ել սար չի գնալ առանց Սարոյի,
սև չորեր հագած կնօտի տանը,
անցած որերը միտը կրերի։
Յեկ ամեն մի խոսք, մի հիշողություն
կտրատում ելին սիրտը ծեր նանի,
և աղաչում եր նա մեռած վորդում՝
մի անգամ խոսի՝ աչքը բաց անի։

64. ՆԵՍՈՅԻ ՔԱՐԱԲԱՂՆԻՍԸ

Կիրակոսը մրսել եր, անկողին եր ընկել, տանջվում
եր տաքության մեջ։ Հառնաներու հիմանոի շուրջը հա-
զարմած, ողեն լիքը, զրուց ելին անում, չիրուս քառ-
շում։

— Տղերք, սա վոր քրտնի վոչ, բան չի դառնալու
Յեկեք սրան մի քարաբաղնիս անենք,—ծխի միջից ա-
ռաջարկեց Նեսո բիձեն:

— Հա, եղ խելքս կտրեց, —հայանություն տվեց
մի ուրիշը:

— Դրան ել ուրիշ ճար չկա, —ձեն տվին ես ու են
կողմից:

— Կիրակոս...

— Հը:

— Ասում ենք՝ քարաբաղնիս անենք,—ի՞նչ ես ա-
սում:

— Վախենում եմ... չդիմանամ...

— Տո՛, կդիմանաս, յերեխա հո չե՞ս:

— Դե... դուք դիտեք... ձեզ... մատաղ:

— Աղջի՛, պղինձը ջուր լցրեք: Մի փեշ ել քար բե-
րեք, կրակին ածեք տաքանան:

Պղինձը դրին կրակին, քարերը ածին կրակի մեջ
ու նստեցին: Նեսո բիձեն սկսեց պատմել, թե քանի հո-
գի յե ազատվել քարաբաղնիսով՝ Մատղաշենց Դանե-
լը, Մաթոսենց Մինասը, Մատուրանց Մելիանը, Մաշիա-
վորանց Մկոն—մինչեւ վոր ջուրն յեփ յեկավ, քարերն ել
կարմրեցին:

— Դե ժամանակն ա, վեր կացեք:

— Տղերք, վախում եմ... կանչեց հիվանդը:

— Դու սուս կաց: Աղջի՛, մի յերկու հասու լեհեր
բերեք, մի չորս-հինգ հոգի ուժով տղեք ել յեկեք ես-
տեղ:

Շորերով փաթաթած յեռման ջրով լիքը պղինձն ու
Հիվանդին դրին իրար հետ, կարմրած քարերը լցրին
ջրի մեջ. քարերը թշչացին, ամպի նման գոլորշին սկսեց
բարձրանալ, շտապով մերմակիները ծածկեցին ու չորս
կողմից մրեն նստուեցին:

— Վայ, խեղդվեցի, —խուլ գոռում եր հիվանդը:

— Խեղդվել չի... աղե՛րք, պինդ նստե՛ք: Գլուխու
ու վնասները ամուր պահե՛ք:

Հիվանդն ազատակում եր, որհասական ջանքեր եր
անում շարժվելու. բայց հիվանդը աժդահա տղամարդ
մրեն նստած՝ չելին թողնում:

— Ո՞ւր ես գնում, —կանչում եյին ես ու են կողմից,
վերելից սեղմում ու հոհուում:

— Հիմի թե չքրտնի՛.

Ու Նեսո բիձեն, հիվանդի վրեն նստած, չիրախը
բերանին՝ չարունակում եր իր պատմությունը:

Նեսո բիձու պատմությունը վերջացավ. վեր կա-
ցան, վերմակները յետ քաշեցին: Դոլորշին ոգեն բռնեց:
Բայց կիրակոսը...

— Կիրակո՛ս, —ձեն տվին, չարժեցին, քաշքացին:
Կիրակոս չկա:

— Ա՛յ, տղա ես վո՞նց երավ, —մոլորված աբուսա-
նեց Նեսոն:

Մյուսները լուռ եյին:

— Վա՛յ տունս, քանդվեց... — Եղբատաց կիրակոսի
կինը: Իրար հրերով տղերքը դուրս եկան կտորը: Աւ
մինչդեռ ներքի կիրակոսի կինը սուզ եր անում, կտիրը
արևում նստուած տղերքը պատմում եյին, թե քանի՛-
քանի հոգի յեն խեղդվել քարաբաղնիսից:

— Տո՛, զե ճակտի դիր ա, եղի. հո նրանց ել Նեսոն
չի խեղդել:

Նեսոն լուռ, զլուխը կախ արած, լսում եր ու չի-
բուխ եր քաշում:

65. ԸՆԿԵՐՆԵՐԸ

Նբանք փոքրիկ ելին՝ յերեխան ու կատուն,
մեհետեղ խաղում եյին տախտակների վրա,
մինչեւ մութն իջներ, մինչեւ հայրը դար տուն

ու հողագույն հացով կերտելքեր նրանց :
Հայրը բանվոր եր : Միշտ առավոտ ծեղին
նա գործարան կերթար ու յետ կդար մթին .
Հաց կբերեր իրա յերեխային միքիչ ,
յերեխան ել կտար՝ կեսր կատուն ուտի :

Եսպես ապրում եցին : Հայրը նրանց մեկ-մեկ
բան կապատմեր գրսի , հարուստների մասին ,
վոր կուշտ են միշտ նրանք , բայց չեն հոգնում յերբեք .
«Ձնտերնացիոնալ» կերպեր՝ յերեխան լսի :

Ու կապատմեր , վոր միշտ ինքը հոգնի պիտի ,
պիտի արյուն թքի , վոր չոր փշրանք գտ տուն .
ու լոռություն գարձած՝ իրիկնային մութին
կլսեցին նրան յերեխան ու կատուն . . .

Բայց մի որ , մի որ կարմիր՝
գործարան չընաց ել հայրը .
աչքերում վճիռ կար մի ,
ժպիտը հաստատ ու անծայր եր :

Փողոցում մարդի՛կ , մարդի՛կ .
գործները արվան . . . կարծես տոն եր . . .
ու նման եր մայիսյան վարդի՝
որերում այդ հոր խնդությունը :

Եեվ մի որ համբուրեց զավակին
բանվոր հայրը , ձեռքին հրացան .
Համբուրեց աչքերը կատվի
ու գնաց անձայն . . .

Բայց գարձավ դոնից բանվոր հայրը ,
համբուրեց նրան վերստին ,
— «Հասկանո՞ւմ եք , — ժամանակն ե՞ւ
զարկելու յենք հարստին» :

Ու յելավ : Փողոցում կրակոց եր :
Փողոցում չոքեց բանվոր հայրը :
Զորքերով լիքն եր փողոցը :
Փողոցում չոքեց բանվոր հայրը :

Զարկեցի՞ն . . . ձչաց բանվոր հայրը .
Հարվածը կրծքին եր հատու :
Բայց հառաչը խոր ու անծայր այն
լսեցին յերեխան ու կատուն . . .

Վագեց , վագեց փողոց փոքրիկ յերեխան .
կատուն վագեց հետքից իր ընկերոջ փոքրիկ :
Նրանց գլխին կարկուտ կարմիր զնդակ տեղաց ,
ու յերկուսն ել ընկան հայր բանվորի կողքին :

Զիազացին նրանք ել հատակի վրա .
չսպասեցին ել զուր՝ հայրը գտ տուն .
նրանք փոքրիկ , փոքրիկ նահատակներ յեղան —
յերեխան ու կատուն :

66. ԻԼՅԻԶԲ

Մենք գիտեյինք , վոր այդ յերեկո Լենինը պիտի
զեկուցեր Գերմանիայի հետ վարած հաշտության բա-
նակցությունների մասին : Այդ յելույթը ամենանշանա-
լուրներից մեկը պիտի լիներ :

Ահա այդ մասին խմանայով եր , վոր ամբոխն ամեն
կողմից գիմուս եր այնտեղ : Դեմքեր չեցին յերեւում :
Կային միայն ձյունե կերպարանքներ , վորոնք պտու լու
ելին անում բուքի հետ և կորչում գիշերային մթության
մեջ : Ամբոխի արթիները հետզհետե լայնանում են ու
լայնանում . մոհին չի կարող նրանց զսպել , նրանց
վազքին սահման դնել :

Կատաղած մըրթիկն անգամ անզոր եր խլացնելու այդ
Հաղթական հնչյունները:

Հանկարծ ամեն ինչ լոռում ե: Կարծես մի գերբնա-
կան ուժ կանգնեցնում ե ամբոխի հեղեղը ճանապարհի
կեսին:

Մըրթիկը վոռնում ե ավելի ուժգին: Այդ վոռնոցի
միջից լսվում ե աղջկա մի զիւ ձայն.

— Իլիչը...

Մարդկային ամբողջ զանգվածը վորոտում է իս-
կույն.

— Իլի՞չը...

Մեր խմբակն ամբոխի մեջ խցկվելով՝ մոռենում է
ավտոմոբիլին, վորի առջեքի լատսերները լույս են սրբ-
ուում: Ո՞վ ե ներսը—չի յերկում: Բայց ահա ցցվում ե
ծանոթ կերպարանքը: Յես տեսել եյի նրան տարիներ
առաջ ժընեում... Նույն ժամանակը շրթունքներին, նույն
թափանցող սուր հայացքը, դուրս ցցված այտոսկրնե-
րը: Միայն գլխարկն եր ուրիշ—բրդե հնագարյան մի
դղակ: Վերաբիուն ել եր ուրիշ—մաշված, մազե նեղ
ոճիքով, վոր չեր համապատասխանում Պետրոգրադի
սառնամանիքներին:

Դա կենին եր: Մի քիչ ծերացած թվաց նա ինձ:
Ամբոխը գոռում ե.

— Իլի՞չը թող խոսի...

Մըրթիկը վոռնում ե ամբոխի գլխին, խլացնում
Մարդկային ձայները: Բայց իլիչի ձայնը հաղթահարում
ե մըրթիկն, հնչում ե պողպատի պես զնդուն, վորոտ-
ընդունուում:

Արդեն չեմ լսում՝ ինչ ե խոսում իլիչը՝ վորովհետեւ
մարդկային ալիքը քշում շպրտում ե ինձ ավտոմոբիլից
հեռու, չգիտեմ՝ վոր կողմը: Միայն հեռվից լսվում են
ծափերի վորոտներ—գնդացիրի ճարճատյունի պես և
յերկարատև հազարածայն «ուռա»-ներ:

...Յերբ յես՝ բոլորովին սառած—վետացած՝ վե-
րադարձա հանրակացարան, արդեն գիշերվա ժամի յեր-
կուսն եր: Դռնապանը, մի բարձրահասակ ծերունի,
հայտնեց ինձ.

— Բուք եմ ասում, ե՛: Բայց ինչպես պողպատի
պես եր հնչում իլլիչի ձայնը:

Բանից յերևաց, վոր այդ ծերունին ել հենց նոր եր
վերադարձել նեվոկի պրոսպեկտից...

67. ԱՆՄԱՀ ԿՈՄՈՒՆԱՐԸ

Հնկավ կոմունան:

Բյուրավկոր դիակները գերեզման մտան:

Բայց այն որվանից, յերբ այդ դիակները տարան
իրենց հետ մարդկանց սրտերը, նրանց գերեզմաններն
ել հանդիստ չառան:

Ու անընդհատ շարքերով նրանց տեսության եյին
գալիս այն համառ կանայք:

Գալիս եյին պաշտելու վորպես վաղեմի սրբավայ-
րերը:

Զինվորները կոպիտ հայեոյանքներով հեռացնում
եյին նրանց, բայց ո՞վ կարող եր նրանց առաջն առնելու

Մակայն դահիճների համար սարսափելին այն եռու
վոր շատ չանցած՝ գերեզմաններն սկսեցին կարմրել...

Անձնիեր կանայք բերում եյին իրենց հետ ծաղիկ-
ների սերմեր ու ծածուկ սիոռում գերեզմանների վրա.

Ու այդ ծաղիկների վառ կարմիրն եր, վոր փայլում
եր գերեզմանների վրա:

Ո՞վ ե այն համառ կինը, վոր միշտ թարմ ե պա-
հում ծաղիկները:

Վոր գիշերներով պտտում ե գերեզմանների շուրջ
ու կարծես հսկում ե նրանց:

Ու տարիներն անցնում են, բայց գերեզմանների
կարմիրը չի սպառվում, չի թառամում...

Հարցրեք այդ կնոջը, և նա ձեզ կպատմի.

— Իմ ամուսինը յերեք հեղափոխության միջից ե
անցել:

Անցած հեղափոխությունից, հունիսյան որերից
հետո նա մի գիշեր կամացուկ յեկալ մեր տուն...

Յեկ այժմ եւ, մայիսյան կոմունայի անկումից հե-
տո, ամեն դիշեր յես սպառում եմ նրան...

Յես գիտեմ, նա կենդանի յե... յես հավատում եմ
և սպառում:

Յերկու հեղափոխությունից հետո նա վերադարձել
եւ, մի՞թե այժմ նա չի դառնալու...

Ու իմ տան դռները միշտ բաց եմ թողնում, վոր նա
դա և կամացուկ ներս մտնի...

Տարիներն անցնում են, բայց նրա հավատը չի մտ-
բում:

Նա անվերջ զարդարում է կարմիրներով կոմունայի
գերեզմանները:

Ու մութ գիշերներին դռները բաց սպառում ե իր
կոմունար ամուսնու վերադարձին...

Յերբեք, յերբեք նա չի հավատում, վոր իր ամուսի-
նը, կոմունայի հերոսը մեռած ե...

68. ԲԱՐԻԿԱԴԻ ՎՐԱ

Բարիկադներում,
կովողների հետ վորպես կոմունար,
մի տղա գերիեց տասներկու տարվան:
Պաթեց համադարկն ու տղան տեսավ,
թե հնչպես րնկան իր ընկերները
բարձր պատի տակ:

Ու խնդրեց տղան.

— Թույլ տվեք գնամ՝
կարոտած մորս
տեսնեմ, յետ դառնամ:

— Ծլկե՞լ ես ուզում:
— Ո՛, վո՛չ, կապիտան,
կոմունարները չե՛ն սարսում մահից:

— Իսկ տունն ո՞ւր ե ձեր:
— Հեռու չի, այստե՛զ, շատրվանի մոտ:
Ու գնաց տղան:

«Խարեց», — ասացին զինվորներն ու սպան
ու քրքչացին բոլորը միասին...

Բայց լոեց ծիծաղն, յերբ տղան հանկարծ
դունատ ու հպարտ նորից հայտնվեց.

կանգնեց պատի մոտ, համարձակ կանչեց.
— Յես յեկա՛, հիմա կարող եք կրակել...

69. ԼԵՆԻԱՆ ԱՐԾԻՎԸ

Յես լենինի հետ առաջին անգամ ծանոթացա 1903
թվին: Ճիշտ ե, այդ ծանոթությունը անձնական չեր,
այլ հեռակա գրագրության կարգով: Բայց նա իմ մեջ
թողել ե անջինջ տպավորություն, վորը յես չեմ մոռա-
ցել կուսակցության մեջ կատարած իմ աշխատանքի
ամբողջ ընթացքում: Յես այն ժամանակ Սիբիրում ար-
որական եյի: 90-ական թվականների վերջերից սկսած
ե հատկապես 1901 թվից, «Խոկրա»-յի հրատարակու-
թյունից հետո, լենինի գործունեյության հետ ունեցած
ծանոթությունս ինձ հանոել եր տիել այն յեզրակա-
ցությանը, վոր մենք հանձին լենինի ունենք մի տնտե-
պոր մարդու: Այն ժամանակ նա իմ աչքին սոսկ կուսակ-
ցության զեկավար չեր. նա նրա փաստական ստեղծողն

եր, վորովհետեւ միայն նա յեր, վոր անում Ելի՞նք
կուսակցության ներքին եյությունը և անհետածդելիչ
կարիքները: Եերբ յես նրան համեմատում եյի մեր կու-
սակցության մյուս զեկավարների հետ, ինձ շարունակ
թվում եր, վոր Լենինի գինակիցները—Փլեխանովը,
Մարտովը, Աքսելրոդը և մյուսները—Լենինից ամբողջ
գլխով ցածր են կանգնած, վոր Լենինը նրանց համեմա-
տությամբ սոսկ զեկավարներից մեկը չե, այլ բարձրա-
գույն տիպի զեկավար, լեռան արծիվ, վոր չպիտե ինչ ե.
վախը, պայքարում և կուսակցությունը խիզախորեն
առաջ ե վարում ուսւական հեղափոխական շարժման
անձանոթ ուղիներով:

Մի քանի ժամանակ անց, յերբ յես արդեն Սիբի-
րում աքսորական եյի, —այդ 1903 թ. վերջերքին եր, —
յես ստացա մի պարզ, բայց խորապես բովանդակալից
նամակ Լենինից: Լենինի նամակը համեմատաբար մեծ
չեր, բայց նա տալիս եր մեր կուսակցության պրակտի-
կալի խիզախ, անվախ քննադատությունը և մոտակա
շրջանի համար կուսակցության աշխատանքի ամբողջ
պահանի դարձանալի հստակ ու սեղմ շարադրումը: Միայն
Լենինը կարող եր ամենախճագած բաների մասին գրել
այդքան պարզ ու հստակ, սեղմ ու համարձակ, յերբ
յուրաքանչյուր նախադասությունը վոչ թե խոսում, այլ
կրակում ե: Այս պարզ և համարձակ նամակն ել ավելի
ամրապնդեց իմ այն կարծիքը, թե հանձին Լենինի մենք
ունենք մեր կուսակցության լեռան արծվին: Զեմ կարո-
ղանում ներել ինձ այն բանում, վոր Լենինի այդ նամա-
կը, ինչպես շատ ուրիշ նամակներ, չին ընդհատակյա-
սախատողի սովորության համաձայն, կրակին հանձնե-
ցի:

Այդ ժամանակվանից սկսվեց իմ ծանոթությունը
Լենինի հետ:

70. ՎԵՐՁԻՆ ԽՈՍՔԸ

Սպիտակների հեծելազորը չղթայեց գյուղը: Աչա-
լուրջ հետեւում եյին ներս ու գուրս անողներին:

Խուզարկում եյին տները, տակն ու վրա եյին անում
ամեն ինչ:

Նրանց հեռանալուց հետո տունն ավերակի յեր վե-
րածվում, կարծես ամեն ինչ գլխիվայր եր չուռ տված.
իսկ յերկաթապատ ծաղկավոր սնդուկները դատարկ-
վում եյին խուզարկության ժամանակ. նրանց միջից
կտորեղենը, սփոռցներն ու շալերն անհետանում եյին...

Հերթը հասավ վանյայի տանը:

— Ահա, ա'յ թե վորտեղ ե:

Վանյուշան չկարողացավ տեսնել՝ ո'վ եր այդ ասո-
զը: Հարձակվեցին նրա վրա, բռնեցին ու քարչ տվին:

— Մայրը վրա վազեց, ուզում եր պաշտպանել,
չթողնել, վոր տանեն, ստկայն չարաղեմ սպան թափա-
հարեց ձեռքն ու ատրճանակի կոթուի խփեց մոր գլխին:
Մայրը ծչաց. աչքերը դուրս թռան կոպերից, ցնցվեց,
ընկափ հատակին: Արյան ալ շիթերը ներկեցին հատակը:

Վանյուշային բերին վարչություն: Բազկաթոռի
վրա նստել եր հրամանատարը՝ սաթե ճխամորճը բեր-
նին, բեղերն եր վոյորում: Նրա կողքին կանգնած եյին
յերկու քաղաքացիներ:

Վանյան նայեց ու ճանաչեց յերեկվա հետապնդող-
ներին:

Վաշտապետն ակնոցները քթին դրեց, վոտից գլուխ
չափեց Վանյային և դիմելով մյուս յերկուսին, հարց-
րեց.

— Սա յե, այնպես չե՞:

— Ճիշտ այդպես, ձե՛րդ ազնվություն:

— Մոտեցի՛ր. լսի՛ր. մենք դիտենք, վոր դու թռու-

ցիկներ եյիր տարածում։ Գիտե՞ս՝ ինչ ե նշանակում
այդ։

— Գիտեմ, —համարձակ պատասխանեց Վանյան,
կարծես նրան գյուղի ճամբան եյին հարցնում։

— Դե ուրեմն պատմի՛ր ամեն ինչ անկեղծորեն։

— Իսկ ի՞նչն ե ձեզ հետաքրքրում։

— Լոի՛ր, ալել-պակաս մի՛ խոսի, —զայրացավ
վաշտապետը։

Մենք գիտենք, վոր դու բոլշևիսի տղա յես, գիտենք, վոր հայրդ թագնված ե...

— Ավելի լավ. ել ինձնից ի՞նչ եք ուզում։

— Դու պետք ե ասես՝ վո՞րտեղ ե հայրդ։

— ԶԵ՞ վոր դուք գիտեք, ել ինչո՞ւ յեք ինձ հարցնում։

— Սրիկա՛, ասա՞՝ վո՞րտեղ ե հայրդ։

— Զգիտեմ, —հանգիստ պատասխանեց Վանյան։
Իսկ մտքում շարունակ կրկնում եր։

«Դու բանվորների ու գյուղացիների բարեկամն
ես»։

— Թե չես ասի, քեզ կթակենք։

— Իսկ մենք չենք ուզում ձեզ պատասխանել։

— Այդ ո՞վ ե «մենք»-ը, թույլ տվեք հարցնել, —
նենդությամբ վրա բերեց վաշտապետը։

— Մենք, կոմյերիտականներս ու կարմիր հետախույզներս, մենք չենք դավաճանի աշխատավոր ժողովը ըսրդին։

— Իսկ շա՞տ եք դուք, —դոռաց վաշտապետը։

— Շա՞տ, ամբողջ աշխարհը։

— Այս դու...քեզ ցույց կտանք վողջ աշխարհ, ևսոր-եզուց Մոսկվան կվերցնենք...Ամբողջ աշխարհ հը...»

— Վո՞նց չե. դորտը փքվեց, բայց տրաքվեց։

— Ինչ ասացի՞ր, լակո՛տ, —ու ձեռքի մտրակը
շրիկաց, ձաղկելով Վանյայի այտը։

Վանյուշան հեզնելով ժպտաց։

— Ուժը ձեր կողմն ե, հետո՞ւ, —հարցրեց նա։

— Հետո կտեսնես. ե՛յ, պատրա՞ստ ե։

— Հրաման քեզ, պատրաստ ե։

— Դո՛ւրս տարեք։

Վանյային գուրս տարան. բերին պարտեզը. կանգնեցրին ծառի տակ. ճյուղից կախված եր պարանը։

— Հագցրե՞ք ողակը։

Վանյայի վիզն անցկացրին ողակը։

— Յեթե չես ասի՝ վորտեղ են ձեր բոլշևիկները,
կկախենք. տալիս ենք յերեք բովե ժամանակ։

Վանյան լուռ եր։

— Մի բոպե...»

Վանյան նայեց շուրջը. կազակներն ու սպաները
խոնված եյին այլտեղ. ահա և բանվորներ—նրանց
զոռով եյին բերել, վոր ներկա լինեն Վանյայի մահա-
պատժին...»

Յերբ նա աչքերը բարձրացրեց, տանիքների վրայով
տեսավ իր ծանոթ անտառը հեռվում, ուր նա զնում եր
կաղին հավաքելու։

Լեռան կանաչազարդ գագաթն աշնան արեի շողե-
րից գուրգուրված, վոսկեղոծվել ու ժպտում եր։

Այս բոլորը՝ արեր, լեռները, թռչուններն ասես
խոսում եյին, կանչում Վանյային. —

Ինչպես լա՞վ ե ապրելը, տե՛ս, իսկ դո՛ւ, Վանյու-
շա, ուզում ես մեռնել. ինչո՞ւ. ասա՛, հայտնի՛ր նրանց,
և դու կապրես, կաշխատես, կշրջես, և այս բոյորը քեզ
հաճույք կպատճառի. դե ասա՛, ասա՛ նրանց ամեն բան։

— Յերկու բոպե, —հնչեց լուռթյան մեջ, ասես
գանգի զողանջ լիներ։

Վանյան սթափից. բերանը բաց արեց, վոր խոսի,
կարծես մեկը հուպ եր տվել կոկորդը:

— Ըսկերներիդ մահը քո մահն ե. ելի պիտի մտնես
Հանքերը և այնտեղ քո գերեզմանը գտնես: Ո՞վ ես դու.
աշխատավոր ժողովրդի զավակ: Ի՞նչ են մտածում քո
բախտակից ընկերները:

— Կարմիր հետախոռյզը կմեռնի, բայց թշնամու
յերեսին ճշմարտությունը կառի. — Հիշե՛ր ի՞նչ ե ասել
Անինը... Լենին...

Նա ինքը շարեց այդ բառը տպարանում, գետնի
տակ. ի՞նչ, այժմ մատոնելո՞ւ յե այդ տպարանը:

Մտքերն արագ սլանում եյին Վանյայի դլխում,
մեկը մյուսին տեղի տալիս:

— Կմատոնես—ամեն ինչ կորած ե. այն ժամանակ
մահ բանյօրներին, թող ապրեն կառավարչի կուշտ յե-
րեխոսները:

— Յերեք...

Կարծես եիեկտրական հոսանքն անցավ Վանյայի
մարմնում. նա սթափից, բացեց աչքերն ու գոռաց.

— Սպասեցե՛ք, կասեմ:

— Հապա՛, — ծուխը բաց թողնելով, խոսեց վաշ-
տապետը:

Իսկ Վանյան խորը շունչ առավ, թափահարեց գլու-
խըն ու բարձր կանչեց.

— Կեցցե՛ Լենինը:

— Կեցցե՛ կոմյերիտմիությունը...

Սև, մագոտ բոռնցքն իջավ Վանյայի գլխին, աչ-
քերը մթնեցին. նո զնզգեց. ողափո սեմեց կոկորդը...

Լուռ եր ամբոխը. լուռ եր ամեն ինչ...

71. ԱՐՏԵ

Երջանից եյի վերադառնում և անցնում հայկական
մի գյուղի միջով:

Դիշերը սաստիկ անձրեւ եր յեկել, այնքան սաստիկ,
վոր շատ պատեր ու խրճիթներ վլցրել եր:

Լույսը նոր եր բացվել: Խրճիթների յերդիկներից
սկսել եյին ծխի սյունյակներ խիստ ծանրությամբ
բարձրանալ և տարածվել տանիքների վրա:

Գյուղի վերջին խրճիթն եյի հասել, յերբ նրա գուռը
ճոռաց, գոմի ներսում կովի բառաչը լսվեց, մի քանի
մանուկների ճիշեր ականջիս հասան և առաջս դուրս յե-
կալ մի ալեզարդ ծերունի՝ բահը ուսին:

Մի վայրկյան ինձ նայեց, հետո պատերի տակով
անցք ընտրեց քայլելու: Քիչ հետո գյուղից դուրս եյինք
յեկել: Յես եւ նրա քայլերով սկսեցի զնալ:

Դեմուգեմ բարձրանալով՝ մինչեւ մշուշալից հորի-
զոնն եր տարածվում ու լեռնաշղթան:

Թանձր, սևագույն մշուշը ծանրացել եր ձորերի և
Հովհանների, լեռների և բլուրների շուրջը: Տեղ-տեղ
յերկնքից գետին իջնող շեշտակի գծերը ցույց են տալիս,
վոր խիստ անձրեւ եր տեղում զանազան կողմերում:

Ծերունին սկսել եր ավելի հանգարտ քայլել:

Նրա հնամաշ տրեխներից ջուրը հոսում եր գույպա-
ների մեջ, վուար թրջում, խոճավությունը թափանցում
եր բաց կուրծքը, և վերարկվի վրա մշուշից կաթիլներ
եյին դիզգում:

Անցնելով, միասմի դիտում եյի յերկու կողքի ար-
տերը: Շատերի միայն մի քանի ակոսներն եյին ավրայել
և մեջտեղում լճակներ դոյցել:

Մի քանիսները յիսմին վողողմել եյին: Զրի հոսանք-
ներն արմատախիւ եյին արել, քեւ-տոտրել ցորենի դա-
լար ծիլերը և հավաքել ակոսների մեջ:

Ցեխ եր գոյացել ամեն մի փոքրիկ շավզի վրա։
ամեն մի փոսի մեջ պղտոր, կարմրագույն ջուր եր կիտ-
վել, և շատ հասկեր լողում եյին նրանց յերեսների վրա,
վորպես խեղդվածներ։

— Վա՛խ, վա՛խ, — արեց ծերունին ու առաջ գնաց։

Բայց վնասն ընդհանրապես շատ ել մեծ չեր յե-
րեւում։ Հողը դիմացել եր։ Յերեւում եյին բոլորովին
չփառացած արաւեր անգամ, ծիլերը դիմացել եյին և այժմ
զվարթությամբ ցցել եյին սկսում իրենց գլուխները։

— Ե՛ւ, փառք աստծո. — խոսեց ծերունին, տեսնե-
լով դրանք, — շատ ել վնաս չի յեղել։

— Քո արտն ել այդպես կլինի, ծերուել, — սրտա-
պընդեցի նրան։

Անիոս՝ զլուխը շարժեց։ Կասկածում եր. հայացքը
միշտ դեպի հեռառներն եյին։ Այդպես քայլելով մենք
հեռացանք գյուղից և հետո ծովեցինք դեպի լեռները։

Մավելիս ծերունին մի բոպէ կանդ առավ և աշխա-
տեց հեռվից նշմարել իր արախ գրությունը։

— Վո՞րն ե արտդ։

— Այն բարձրինը։

Ինչ-վոր ջրի հեղեղատներ եյին հոսում այնտեղ,
ջրակույտեր փայրիում։ Մի գուցե այդ ջրերը նրա ար-
տի միջովն են անցել, ամեն ինչ սրբել, տարել։

Ծերունին գունատվեց։

— Տունս քանդվել ե. . . . — մրմնջաց նա։

— Մի՞թե վնասվել ե։

— Զգիտեմ դեռ, — ասաց նա խեղդված ձայնով, —
դուցե աչքերս չեն տեսնում. . . . Ծերացել եմ. . . .

Առաջ գնացինք։ Մտտենում եյինք։ Քայլերն ավելի
դժվարանում եյին. վերեից գրեթե ցեխի հեղեղ եր, վոր
իշտում եր ցած, խառն ծիլերով, ցողուններով. . . .

Ծերունին հեռաւ եր. շունչը կտրվել եր։ Քիչ ել
քայլեցինք։ Ել կանաչ յերեւում, ել վոչինչ. ցեխի

հեղեղ և ջուր եր, վոր տեսնում եյինք, ավերիչ, աստ-
կանիչ հեղեղ. . . .

Մի քանի քայլ անելուց հետո կանդ առավ ծերուանին
և բահը ուսից ցած թողեց։

իր արտի կողքին եր։ Թշվառ արտ. . . .

Վերկից, փոսերի մեջ գոյացած ջրերը պատռել եյին
նրանց թումբերը, ուժգնությամբ ցած հոսել և գրեթե
սրբել եյին արտը։

Յերկար, կանաչ յերկար չերտեր միմյանց վրա,
արմատախիլ ջարդված, սահել եյին ամեն ուղղությամբ
և թաթախվել ցեխով։ Վոմանք մինչև վիզը խրվել, ու-
ժիշները հաղիվ եյին յերեւում. . . .

Հողն ամբողջ կանաչել եր նրանց գիտկներով. . . .

Յեվ անձրես տեղում եր, տեղում ու իր խոչոր կա-
թիներով ճղփացնում լճացած ջրերը։

Ընկալվ բահը ծերունու ձեռքից, աչքերը մթնեցին,
և նրա տեղն ու տեղը, իր ընտանիքին կերտակրող ցորենի
գիտկների կողքին՝ նստեց ու զլուխը ձեռքերի մեջ ծած-
կեց. . . .

Զիս քշեցի և հեռացա։ Միտթարական վոչ մի խոսք
ասելու սիրտ չունեցա։

Յեվ յերբ հեռվից յետ նայեցի, տեսա թշվառ ծերու-
նուն միշտ նույն գիրքի մեջ, նստած իր ավերված արտի
կողքին, զլուխը ձեռքերին և ալեզարդ մազերը տեղացող
անձրեսի տակ. . . .

72. ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

(Հեքյաք)

Լինում են, չեն լինում, յերկու աղքատ ախակեր են
լինում։ Մտածում են՝ ինչ անեն, վոնց անեն, վոր իրենց
առունը պահեն։ Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը

գնա մի ունեսրի ծառա մտնի, ոռճիկ ստանա, ղրկի
տուն:

Եսպես ել մեծը վեր ե կենում, զնում մի հարուսախ
մուտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին ել դարնան
կլիքի ձեն ածելը: Ես հարուստը մի շաված պայման ե
դնում ծառային: Ասում ե. «Մինչև են ժամանակը թե
դու բարկանաս—զու հազար մանեթի տուգանք տաս
ինձ, թե յես բարկանամ—յես տամ»:

— Յես վոր հազար մանեթ չունեմ, վո՞րտեղից
տամ,—ասում ե ծառան:

Բան չկա, փոխարենն ինձ տասը տարի ձրի կծառա-
յես:

Տղեն մին վախենում ե ես տարորինակ պայմանից,
մին ել մտածում, թե՝ ինչ պետք ե պատահի: Ինչ ուղում
են անեն, յես եմ ու չեմ բարկանալ, պրծավ—գնաց: Իսկ
թե իրենք կբարկանան, թող իրենք ել տուժեն իրենց
դրած պայմանով:

Ասում ե՝ լավ, համաձայնում ե: Պայմանը կապում
են, ու մտնում ե ծառայության:

Մյուս որը վաղ տերը վեր ե կացնում ծառային, զըս-
կում ե արտը հնձելու:

— Գինա՛, —ասում ե, —քանի լույս ե, հնձի, վոր
մութն ընկնի, կգաս:

Ծառան զնում ե, ամբողջ որը հնձում, իրիկունը
գալիս ե տուն: Տերը հարցնում ե.

— Եղ ո՞ւր յեկար:

— Դե արեք մեր մտավ, յես ել յեկա:

— Զե՛, եղպես չի: Յես քեզ ասել եմ՝ քանի լույս
ե պետք ե հնձես: Արեք մեր մտավ, բայց տես, նրա տի-
պեր լուսնյակը գուրս յեկավ: Մա ի՞նչ պակաս ե լույս
տալիս...

— Եղ վո՞նց կլինի...—զարմանում ե ծառան...

— Հը՞, դու ադրեն բարկանո՞ւմ ես,—հարցնում ե
տերը:

— Զե՛, չեմ բարկանում...—յես միայն ասում եյի՝
հողնած եմ...միքիչ հանգստանամ...—կկղում ե վա-
խեցած ծառան ու զնում ե նորից հնձելու:

Հնձում ե, հնձում, մինչև լուսնյակը մեր ե մտնում:
Բայց լուսնյակը մեր ե մտնում թե չե, դարձյալ արե-
զակն ե դուրս գալի: Ծառան ուժապառ արտում վեր ե
ընկնում:

— Վա՛յ քու արտն ել հարամ ըլի, քու հացն ել, քու
տված ոռճիկն ել...—սկսում ե հայհոյել հուսահատ-
ված:

— Հը՞, դու բարկանո՞ւմ ես,—կանգնում ե գլխին
հարուստը:—Յերբ վոր բարկանում ես, մեր պայմանը
պայման ե: Ել չասես, թե քեզ հետ առանց իրավունքի
վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում ե՝ ծառան կամ հազար
մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում ե կրակի մեջ: Հազար մանեթ չուներ,
թե տար, հողին ազատ աներ. տասը տարի յել ես տեսակ
մարդու ծառայել անկարելի բան եր: Միտք ե անում
միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ ե տալիս
հարստին, գտոն ու գտարկ վերադառնում տուն:

— Հը, ի՞նչ արիր, —հարցնում ե փոքր ախպերը:
Ու մեծ ախպերը նստում ե, զլիսի յեկածը պատմում:
ինչպես մոր պատահել եր:

— Բան չկա, —ասում ե փոքրը, —դարդ մի անի՞ն
դու տանը կաց, հիմի յել յես զնամ:

Վեր ե կենում հիմի յել փոքր ախպերն ե զնում ծառ-
ան մտնում ելի նույն հարստի մոտ:

Հարուստը զարձյալ վորոշում ե մինչև դարնան
կկղի ձեն ածելը, ու պայման ե զնում, վոր յեթե ծառան
նեղանա, հազար մանեթ տուգանք տա կամ տասը տարի

ձրի ծառայիք. թե ինքը բարկանա, հազար մտնեթ տա, ու են որից ել ծառան աղատ ե:

— Զե՛, եղ քիչ ե, —հակառակում ե տղեն: —թե դու բարկանաս, դու ինձ յերկու հազար մանեթ տաս, թե յես բարկանամ, յես քեզ յերկու հազար մանեթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ:

— Լավ, —ուրախանում ե հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ ել փոքր ախպերն ե մտնում ծառայության:

Առավոտը լուսանում ե, ես ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս ե գնում, տուն ե գալիս, ես ծառան զեռ քնած ե:

— Այ տղա, դե վեր կաց ե՛, որը ճաշ դառավի:

— Հը՞, բարկանո՞ւմ ես... —դլուխը վեր ե քաշում ծառան:

— Զե՛, չեմ բարկանում, —վախեցած պատասխանում ե տերը, —միայն ասում եմ՝ պետք ե արտ զնանք հնձելու:

— Հա, վոր եղ ես ասում, վոչինչ, կգնանք, ի՞նչ ես վոազում:

Վերջապես ծառան վեր ե կենում, սկսում ե տրեխները հագնել: Տերը դուրս ե գնում, ներս ե գալի, սա զեռ տրեխները հագնում ե:

— Այ տղա, դե չուտ, հադի յե...

— Հը՞, հո չե՞ս բարկանում:

— Զե՛, ո՞վ ե բարկանում, յես միայն ուզում եյի ասել՝ ուշանում ենք...

— Հա, եղ ուրիշ բան ե. թե չե՞ պայմանը պայման ե:

Մինչև ծառան տրեխները հագնում ե, մինչև արտն ե գնում, ճաշ ե դառնում:

— Ել ի՞նչ հնձելու ժամանակ ե, —ասում ե ծառան,

— տեսնում ես՝ ամենքն ել ճաշում են, մենք ել մեր ճաշն ուտենք՝ հետո:

Նստում են, ճաշն ուտում: Ճաշից հետո յել ասում ե. «Մշակ մարդ ենք, պետք ե միքիչ ել քնենք հանգստանանք, թե չե՞»: Գլուխը կոխում ե խոտերի մեջն ու քնում ե մինչև իրիկուն:

— Տո՛, վեր կաց, մթնեց ե՛, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... Վա՛յ քու դեսը զրկողի վիզը կոտրի, վա՛յ քու կերածն ել հարամ ըլի, քու արածն ել... Ես վա՛յ կրակի մեջ ընկա... —սկսում ե գոոդոոալ հուսակաված տերը:

— Հը՞, չինի՞ թե բարկանում ես, —գլուխը վեր ե քաշում ծառան:

— Զե՛, ո՞վ ե բարկանում, յես են եյի ասում, թե մթնել ե, տուն գնալու ժամանակն ե:

— Հա՛, եղ ուրիշ բան ե, զնանք, թե չե հո մեր պայմանը զիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ: Գալիս են տուն: Տեսնում են հյուր ե յեկել: Ծառային զրկում ե, թե՝ գնա վոչխար մորթի:

— Վո՞րը:

— Վորը կպատահի:

Ծառան գնում ե: Միքիչ հետո լուր են բերում հարստին, թե հասի, վոր քու ծառան ամբողջ հոտը կոտրեց: Ես հարուստը վազում ե, տեսնում ե՝ ճիշտ վոր, ինչ վոչխար ունի, բոլորը ծառան մորթել ե: Գլխին տալիս ե, գոռում:

— Եղ ի՞նչ ես արել, այ անաստված. քու տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր...

— Դու ասիր՝ «վոր վոչխարը պատահի՝ մորթի» ո յես ել յեկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթեցի: Ուրիշ ամել-պակաս ի՞նչ եմ արել, —հանդիստ պատասականում ե ծառան, —բայց կարծեմ դու բարկանում ես.

— ԶԵ՛, բարկանում չեմ, միայն ափսոսս դալիս ե, վոր եսքան ապրանքս փչացավ...

— ԷՇՎ, վոր բարկանում չես, ել կծառայեմ:

Հարուստը մտածում ե՝ ի՞նչ անի, վոր ես ծառայից ազատվի: Պայման ե կապել մինչև մին ել գարնան կիցի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ վո՞րտեղ են գարունն ու կիուն...

Միտք.ե անում, միտք, մի հնար ե մտածում: Կնոջը տանում ե, անտառում մի ծառի վրա հանում ու պատվիրում, վոր «կուկու» կանչի: Ինքը գալիս ե, ծառային տանում, թե՝ արի գնանք վորսի: Հենց անտառն են մտնում թե չե, կինը ծառի վրա կանչում ե «կուկու», կուկու»:

— ԲՀԵ՛, աչքդ լույս, — ասում ե ծառային տերը, — կիւն կանչեց, ժամանակդ լրացավ...

Տղեն դլխի յե ընկնում արիոջ խորամանկությունը:

— ԶԵ՛, — ասում ե, — ո՞վ ե լսել, վոր տարվա ես յեղանակին, ձմեռվա կիսին, կիուն ձեն ածի, վոր սա ձեն ե ածում: Յես պետք ե ես կկվին սպանեմ, սա ի՞նչ կիույե...

Ասում ե ու հրաժանը քաշում դեպի ծառը:

Տերը գոռալով ընկնում ե առաջը.

— Վա՛յ, չզարնես, աստծու սիրուն... ու լինի քու պատահելու որը, ես ի՞նչ փորձանք եր, վոր յես ընկամեջը...

— ՀԵՌ, չինի՛ թե բարկանում ես...

— Հա՛, ախտեր, Հեռիր ե: Արի՛, ինչ տուգանք տալու յեմ, տամ, քեղանից ազատվեմ: Իմ դրած պայմանն ե, յես ել պետք ե տուժեմ:

Եսպես փոքր ախտերը մեծ ախտոր տված պարտքի թուղթը պատռում ե, հաղար մանեթ ել տուգանք տունում ու վերադառնում տուն:

| | | |
|--|-----------------|----|
| 1. Տոկար Վոսկանը | Հ. Մելիքյան | 3 |
| 2. Մեր կոլիողի աբաերը | Ան. Հակոբյան | 4 |
| 3. Ազստամբություն | Ագնեվ | 5 |
| 4. Արյունոտ կիրակի | Ոկունեվ | 7 |
| 5. Պետք ե իշխանությունը վերցնել, Ագնեվ | | 10 |
| 6. Հոկտեմբերի քսանհինգը | Ծան Ռիդի | 11 |
| 7. Մայիսյան որերին | Ստ. Զորյան | 13 |
| 8. Խլիչը գյուղում | Լար | 15 |
| 9. «Խլիչի բուխտը» | «Կոմոնիստ»-ից | 17 |
| 10. Նաշկա, Գ. Սարյան | | 18 |
| 11. Բանակ գնաց | Ս. Տարոնցի | 19 |
| 12. Ընկեր Ստալինը | | 21 |
| 13. Գիշեր, Հ. Հայրապետյան | | 22 |
| 14. Գիգանտի դաշտերում | բարգմ. Առաքենից | 22 |
| 15. Մայիսյան տոնին | Գ. Մեսյան | 24 |
| 16. Պառակ թրքուչին | «Կոմոնիստ»-ից | 25 |
| 17. Կոխը, Հովհ. Թումանյան | | 27 |
| 18. Ծերունու հառաջանքը | Հովհ. Թումանյան | 28 |
| 19. Ճախարակ, Ղ. Աղայան | | 30 |
| 20. Առաջին քննություն | | 31 |
| 21. Ինտերնացիոնալ, թարգմ. Յե. Զարենց | | 32 |
| 22. Մի որավար հող, Բաֆիի | | 33 |
| 23. Թուշանի քարափը | Ն. Զարյան | 36 |
| 24. Ռողիդ ժամի չորսին | Լարին | 37 |
| 25. Լենին, Ա. Վշտունի | | 39 |
| 26. Հաջի-Քենդ, Ալազան | | 40 |
| 27. Կարմիր բանակայինի վերադարձը | Ն. Զարյան | 42 |
| 28. Ինդուստրացում | Գ. Սարյան | 42 |
| 29. Շչուկար պապը | Նոյնոյով | 43 |
| 30. Վերադարձ | Գ. Գրիգորյան | 45 |
| 31. Սևանա լիճը | Լութաչարսկի | 46 |
| 32. Զորագետում | Ս. Վահումի | 47 |
| 33. Լենտեքստիի բանշենում | Գ. Սարյան | 47 |
| 34. Աշխատանքի յերգ | Հ. Հակոբյան | 49 |
| 35. Կյանքի գնով | Անկար Ռայլի | 50 |

| | | | | | | | | |
|-----|---|------------|---|---|---|---|---|-----|
| 36. | Լալվար սարը, Վ. | Միքայելյան | . | . | . | . | . | . |
| 37. | Հրդեհը նավթահանքում, Շիրվանզարկ | . | . | . | . | . | . | 52 |
| 38. | Քոչը, Վ. | Միքայելյան | . | . | . | . | . | 53 |
| 39. | Յեղը քշեցին, տարան... Հ. | Ճուղուրյան | . | . | . | . | . | 53 |
| 40. | Զան բամբակ, Ա. | Շայրոն | . | . | . | . | . | 57 |
| 41. | Արթիկում, Ակսել Բակունց | . | . | . | . | . | . | 58 |
| 42. | Տուֆի յերգը, Ն. Զարյան | 2. - 60 | . | . | . | . | . | 59 |
| 43. | Արևելքին, Ա. Բայրամով | . | . | . | . | . | . | 60 |
| 44. | Արևը, Արազի | . | . | . | . | . | . | 61 |
| 45. | Գութանի յերգը, Հովհ. Թումանյան | . | . | . | . | . | . | 63 |
| 46. | Գիքորը, Հովհ. Թումանյան | . | . | . | . | . | . | 64 |
| 47. | Գարուն, Յե. Զարենց | . | . | . | . | . | . | 65 |
| 48. | Կապիտալի լծի տակ, Վ. | Հյուգոն | . | . | . | . | . | 66 |
| 49. | Արևածաղին, Վ. | Տերյան | . | . | . | . | . | 67 |
| 50. | Գարնանային սոսակոտ, Թափփի | . | . | . | . | . | . | 68 |
| 51. | Խրամատի սարսափը, Ռեմարգ | . | . | . | . | . | . | 69 |
| 52. | Քոանվեցը, Ն. Զարյան | 2. - 72 | . | . | . | . | . | 71 |
| 53. | Պայթյունը հանքում, Հ. Մելիք-Հայկազյան | . | . | . | . | . | . | 73 |
| 54. | Յեկ, գարնան անձրս, Ալ. Ծառուրյան | . | . | . | . | . | . | 75 |
| 55. | Կարմիր բարիկադ, Արազի | . | . | . | . | . | . | 75 |
| 56. | Դարխալի ձորը, Գ. Բաշինջաղյան | . | . | . | . | . | . | 76 |
| 57. | «Թշնամիները», Գարշին | . | . | . | . | . | . | 78 |
| 58. | Սիբիրում, Ն. Զարյան | 2. - 80 | . | . | . | . | . | 79 |
| 59. | Իլանեն, Քոչիշվիլի | . | . | . | . | . | . | 80 |
| 60. | Բանվորուհու որորը, Ալ. Ծառուրյան | . | . | . | . | . | . | 82 |
| 61. | Մեր ճամբեն կոլխոզն ա, կոլխոզը | . | . | . | . | . | . | 83 |
| 62. | Տեմպեր, Ն. Զարյան | 2. | . | . | . | . | . | 87 |
| 63. | Սարոյի մահը, Հովհ. Թումանյան | . | . | . | . | . | . | 88 |
| 64. | Նեսոյի քարաբաղնիսը (Կրմ.) Հովհ. Թումանյան | . | . | . | . | . | . | 89 |
| 65. | Ընկերները, Յե. Զարենց | . | . | . | . | . | . | 91 |
| 66. | Իլիչը, Եպշտեյն | . | . | . | . | . | . | 93 |
| 67. | Անմահ կոմոնարը, Արազի | . | . | . | . | . | . | 95 |
| 68. | Բարիկադի վրա, Վ. Հյուգոն | . | . | . | . | . | . | 96 |
| 69. | Լեռան արծիվը, Մտալին | . | . | . | . | . | . | 97 |
| 70. | Վերջին խոսք, բարգի. Եղցզմզոս | . | . | . | . | . | . | 99 |
| 71. | Արար, Վ. | Փափազյան | . | . | . | . | . | 103 |
| 72. | Տերն ու ծառան Հովհ. Թումանյան | . | . | . | . | . | . | 105 |

ՀՀ Ազգային գրադարան



N1 8248242

ԳԻԱԸ 1 ՈՂԵՔ

8049

ՏՎ

1

2



Մ. Գասպարյան և Խ. Այվազյան
Կнига для чтения
Для школ малограмотных
Гиз ССР Армении, Эривань, 1934